

ՎԱՅԱՍԱՆԵԱՆ ՄԱՍԻՍ

Առաջիկայ Արտահերթ Ընտրութեան Կարեւորագոյն Զարցը

ՅԱԿՈՔ ԲԱՂԱԵԱՆ

Արտահերթ ընտրութեան մասին վարչապետ Փաշինեանի յայտարարութիւնից յետոյ Հայաստանում քննարկուած է հարցը, թէ ինչ օրենսդրութեամբ պէտք է գնալ ընտրութեան՝ եղած օրէնսգրքով, թէ՞ Ընտրական օրէնսգրքը պէտք է փոխուի:

Ընտրական օրէնսդրութեան եւ սահմանուած խաղի կանոնների հարցը անշուշտ յոյժ կարեւոր է, քանի որ դրանցով է նաեւ որոշուում, թէ ինչ սողանցքներ են թողնուում, այսպէս ասած, հին քաղաքական մշակոյթի եւ «աւանդույթներին» դրսեւորման համար: Միւս կողմից, սակայն, մտածել, թէ այդ ամէնը կախուած է օրէնսդրութիւնից միայն, կը լինի ինքնահարեւոյթ: Ի վերջոյ, ամէն ինչի, այդ թւում՝ օրէնսդրութեան աշխատանքի աղբիւրը քաղաքական կամքն է եւ այդ կամքի իրացումը: Այդ իմաստով որեւէ օրէնսդրական ռեֆորմ արւում է թերեւս երկարատեւ ադապտացիայի ակնկալիքով կամ պէտք է արուի այդպէս, որովհետեւ օրէնսդրութիւնն ինքնին չի լինի արդիւնաւէտ, եթէ գուգահեռ չընթանայ քաղաքական մշակոյթի եւ մտածողութեան համարժէք ռեֆորմացիա: Այդպիսով, հազիւ թէ նոր օրէնսդրութիւնը փոխի էական բան, եթէ դա չի փոխուելու քաղաքական ուժերի վարքագծում:

Ըստ այդմ, յառաջիկայ արտահերթ ընտրութեան հարցում էականը թերեւս այդ ինչերն է՝ որեւէ բան փոխուելու է քաղաքական ուժերի վարքագծում, որակների, քաղաքական մշակոյթի, հետեւաբար նաեւ դրանով հանրութեանը ներկայացուող բովանդակութեան մէջ, թէ՞ ոչ: Ի վերջոյ, ոչ թէ խաղի կանոններն են որակ որոշում, այլ մեծ հաշուով որակն է որոշում խաղի այնպիսի կանոններ, որոնք յետագայում այլեւս թոյլ չեն տալիս շեղում այն որակներից, որոնց ազդեցութեան կամ ներգործութեան չնորհիւ սահմանուած են հանրային համակեցութեան եւ քաղաքական պայքարի խաղի կանոնները: Ահա այդ իմաստով է նաեւ յառաջիկայ արտահերթ ընտրութեան կարեւոր, թէ հանրութեանն ինչպէս կը ներկայանան նոր ուժերը, որոնք մինչ այժմ՝ իսկ դա ներառում է ոչ միայն լեւոն-դաւիթեանի, այլ նաեւ նախալեւոնական շրջանը, չեն ունեցել առանցքային հանրային դերակատարում կամ չեն եղել քաղաքական դաշտում ընդհանրապէս:

Մեծ հաշուով, հանրային եւ պետական նշանակութեան տեսանկիւնից յառաջիկայ արտահերթ գործընթացը ոչ միայն իր դէժիւրէ արդիւնքով է կարեւոր, թէ ինչպիսի յարաբերակցութեամբ քաղաքական պատկեր եւ այն արտացոլող խորհրդարան կ'ունենանք մենք, այլ կարեւոր է նաեւ նրանով, թէ արդեօք հանրութիւնը կը ստանան յորդանոցի քաղաքական առաջարկ եւ յայտ, եթէ անգամ հայտատուն չմտնի խորհրդարան:

Երկարաժամկէտ քաղաքական ծրագիրն ու ռազմավարութիւնը Հայաստանի քաղաքական եւ պետական արդիականացման կարեւորագոյն հանգամանք է, որը մեծ հաշուով մինչ այժմ եղել է բաց: Ի դէպ, նաեւ այդ հանգամանքն է, որ բերում է իրավիճակի, երբ մեր պետութիւնը կառավարում է առանց երկարաժամկէտ եւ գործուն ռազմավարութիւնների, որոնք լաւագոյն դէպքում միայն թղթի վրայ են: Որովհետեւ պետական կառավարում իրականացնող ուժերը նախ իրենք պէտք է որպէս քաղաքական ուժ ունենան քաղաքական ճակատագրի հետ առնչուող իրարաժամկէտ ռազմավարութիւն տարբեր սցենարներով՝ արագ ջղովութիւնից մինչեւ անջողողութիւնների միջով անցնելու կարողութեամբ, որպէսզի յետոյ պետական կառավարման լծակ տնօրինելիս ի վիճակի լինեն մշակել երկարաժամկէտ պետական ռազմավարութիւններ եւ դրանք լինեն առարկայական:

Այդպիսով, «ինչպիսի օրէնսգրքով» հարցի փոխարէն՝ յառաջիկայ արտահերթ ընտրութեան համար արդիական եւ կարեւոր է «ինչպիսի որակով» հարցը: «ԱՌԱՋԻՆ ԼՐԱՏՈՒԱԿԱՆ»

Բոմժ, Ատրպէյճնի... Սա՞ է Ձեր Քարոզարշաւը

Աժ Բարգաւաճ Հայաստան (ԲՀԿ) խմբակցութեան մի խումբ պատգամաւորներ այցելել են Հայաստանի մարզեր, որտեղ բնակիչների հետ հանդիպման ժամանակ մի քաղաքացի նրանց ասել է. «Ումից էք ուզում երկիրը փրկել: Մեր ժողովուրդը ընտրել է պարոն Փաշինեանին»: Աժ պատգամաւոր Արման Աբովեանն արձագանքել է. «Սալամ: Ատրպէյճանից էք»:

...Մի ժամանակ առաջ վազգէն Մանուկեանը Գիւմրիում Փաշինեանի կողմնակիցներին վարձու բոմժեր անուանեց, Գազիկ Մառուկեանը գլխին շան լափ թափեց: Վանեցեանն էլ ներողութիւն խնդրեց: Իմիջիայլոց, այդ միջադէպից յետոյ ՀՓՇ-ն սկսեց ճաքեր տալ:

Հիմա Գազիկ Մառուկեանի համար ռազմադատարանական աշխատանքների գործ է բացուել: Լաւ կանի, մի հատ հաւեսով

բամփի իր կուսակցի գլխին: Այսպէս էք նախընտրական քարոզարշաւ անելու: Այդ ո՞վ է ասել, որ ձեզ ամենուրէք ծաղիկներով ու փուռիկներով են դիմաւորելու: Մեզ Նիկոլի աջակիցները չեն հետաքրքրում, բայց մէկին բոմժ էք ասում, միւսին՝ ատրպէյճանցի, ուրիշ լեզու չգիտէք:

«Մենք սրանց հեռացնելու ենք Հայաստանից. դա լինելու է արիւնոտ ճանապարհ, չեմ ուզում ձեզ խաբել»: Խոստովանութեան հեղինակը ՀՀԿ-ական Մարգարիտ Եսաեանն է:

Ինչ խոսք, տիկնոջ խոստովանութիւնը գովելի է, բայց խորհուրդ ենք տալիս շտապել: 5 ամիս

Խնդիրն Ատելութիւնը Յաղթահարելն Է ԱՐԱՍ ԱՐԱՅԱՄԵԱՆ

Պէ՞տք են արդեօք արտահերթ խորհրդարանական ընտրութիւններ, թէ՞ ոչ: Եթէ պէտք են, ապա ո՞ւմ իշխանութեան օրօք եւ ի՞նչ կանոններով են դրանք անցնելու: Արդեօք դրանց արդիւնքում քաղաքական ճգնաժամը կը մեղմանա՞, թէ, հակառակը, աւելի կը խորանայ: Դրանք բոլորը բանավէճի թեմաներ են, եւ քաղաքական ուժերն, իրենց շահերից ելնելով, հակադիր տեսակէտներ են յայտնում:

Մեր քաղաքացիները նոյնպէս նշուած հարցերին տարբեր պատասխաններ են տալիս: Ընտրութիւնների հարցում ես չունեմ վերջնական պատասխան՝ դրանք պէ՞տք են, թէ՞ ոչ: Կարելի է փաստարկներ բերել թէ՛ դրանց անցկացման օգտին եւ թէ՛ դրանց դէմ: Ես հաստատ գիտեմ միայն մի բան, որն անհրաժեշտ է մեր հասարակութեանը՝ մեզ պէտք է յաղթահարել ատելութիւնը: Երբ ֆէյսպուքում ես կարդում եմ ատելութեամբ լցուած դատողութիւններ մի կողմից «դաւաճանի» եւ «կապիտուլեանտի», միւս կողմից՝ «թաւանջիների» մասին, դրան սովոր եմ: Բայց այդ ֆէյսպուքեան իրականութիւնը տրամադրութիւն է ձեւաւորել նաեւ իրական կեանքում: Մարդիկ ոչ միայն ատելութիւն են դրսեւորում իրենց պատկերացրած «հակահերոսների» հանդէպ, այլեւ այդ բացասական էմոցիաները տարածում են իրենց մերձակողների վրայ: Այդ հողի վրայ թշնամանում են ընկերներ, հարազատներ, անգամ ընտանիքի անդամներ՝ բնական տարաձայնութիւններից սարքելով ինչ-որ անյաղթահարելի պատ՝ փշալարերով պատուած:

Եւ այստեղ ես խնդիր եմ տեսնում ոչ միայն Փաշինեանի ընտրագանգուածի մէջ, որի ներկայացուցիչները կարող են խօսել

է, ինչ հեռացնում էք, բայց հրաւիրուած ցուցարարներին լահմաշուն ու պիցցա գնելու համար միլիոնաւոր դոլարներ ծախսելուց բացի ոչնչի չհասաք: Հիմա 3 ամսից ընտրութիւն է, յանկարծ ժողովուրդը կրկին չհիասթափուի օդի մէջ տուած ձեր խոստումներից: Չստացուի, որ ինչքան նոր ատոմակայան ու գազամուղ էիք կառուցում, նոյնքան էլ իշխանափոխութիւն էք իրականացնում:

Հանրապետականներն ի վիճակի չեն դասեր քաղել իրենց սխալներից: Հասարակութեան անուանեցին ժեխ, բոմժ եւ այլն, արդիւնքում չկարողացան մարդ հավաքել հրապարակներում: Հիմա էլ նույն հասարակութեանը վախեցրեք արյունով, տեսնե՞ք՝ քանի հոգի կը գայ ձեր հետեւից:

Իսկ ընդհանրապէս, նման յայտարարութիւններից յետոյ տիկին Մարգարիտը պէտք է պատրաստ լինի, որ ինչ-որ մէկն էլ իրեն կարող է փողոցում արիւնլուսայանի: Իհարկէ, զուտ քաղաքական դրդապատճառներով՝ հաշուի առնելով իրենց իշխանութեան տասնամեայ յետագիծը:

«ՉՈՐՐՈՐԴ ԻՇԽԱՆՈՒԹԻՒՆ»

միայն «էս երկիրը 30 տարի թաւանելու» թեմայով: Ինձ, թերեւս, աւելի շատ մտահոգում է այն, որ կրթուած, զարգացած մարդիկ՝ լայնախոհութեան եւ հանդուրժողականութեան օրինակ ցոյց տալու փոխարէն, նոյնպէս ընկել են էմոցիաների գիրկը եւ անաքող ատելութեամբ են խօսում ներկայիս վարչապետի կամ նրա ընդդիմախօսների մասին:

Այստեղ, իհարկեւ, մեծ է Նիկոլ Փաշինեանի մեղքը, որը ոչ միայն յեղափոխութիւն իրականացրեց «նախորդ իշխանութիւնների» հանդէպ տարիներ շարունակ ատելութիւն գնեցնելով եւ դրա վրայ հիմնուելով (դա քիչ թէ շատ անխուսափելի էր) իշխանութեան գալով, բայց չունենալով որեւէ դրական ծրագիր, չդրսեւորեց պետական մտածողութիւն եւ շարունակեց «ատելութեան գիծը»՝ է՛լ աւելի բորբոքելով վերոյիշեալ ընտրագանգուածը եւ խորացնելով հասարակութեան պառակտումը: Եւ հիմա, նախընտրական արշաւի ժամանակ նա, բնականաբար, կ'օգտագործի իր ողջ հեռուորական վարպետութիւնը՝ «շնաբարո դուրապրծուկների» թեման զարգացնելու համար: Իր ընտրագանգուածի հրճուալից ոռնոցների ուղեկցութեամբ: Բայց կրկնեմ՝ ատելութեանն ատելութիւն հակադրելը սխալ է, հակաարդիւնաւէտ է՝ ատելութիւնը կարելի է յաղթահարել միայն սիրով: Այնպէս որ, սիրելի քաղաքացիներ, եղէք «նիկոլական», «սերժական», «Ռոբակական», թեկուզ «գրիգորամայեանական»: Դա ամենեւին հիմք չէ՝ որեւէ մէկին ատելու համար:

«ԱՌԱՒՈՏ»

ՄԱՍԻՍ
ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ
ՊԱՇՏՕՆԱԹԵՐԹ՝
ՍՈՑԻԱԼ ԴԵՄՈԿՐԱՏ ՅԱՅՄԱԿԵԱՆ
ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ
Արեւմտեան Ամերիկայի Շրջանի

ԽՄԲԱԳԻՐ
ԳՐԻԳՈՐ ԽՆՏԱՆԵԱՆ

ՎԱՐԻՉ ՏՆՕՐԵՆ
ՎԱՐԷ ԱԶԱՊԱՅԵԱՆ

MASSIS Weekly
Organ of the Armenian Social
Democratic Hunchakian Party
of Western USA
1060 N. Allen Ave.
Pasadena, CA 91104
Phone: (626) 797-7680
Fax: (626) 797-6863
E-Mail: massis2@earthlink.net
http://www.massisweekly.com

(USPS 667-310) (ISSN 0744-334X)
Published Weekly
Except Two Weeks in August

ANNUAL SUBSCRIPTION RATES:
USA \$50.00, \$100.00 (First Class)
Canada \$125.00 (Air Mail)
Overseas \$250.00 (Air Mail).
All payments must be made in
US funds & Drawn on US banks.

Periodicals Postage Paid
at Pasadena CA.
Please Send Address Change To
MASSIS WEEKLY

Պատարակելով հայաստանեան մամուլին մէջ լոյս տեսնող տարբեր յօդուածներ «ՄԱՍԻՍ» անպայմանօրէն չի բաժնետիր հոն արտայայտուող բոլոր միտքերը

ԼՈՒՐԵՐ

Վարչապետն Ու Նախագահը Քննարկած Են Ընտրութիւններուն Առնչուող Հարցեր

Վարչապետ՝ Նիկոլ Փաշինեան այսօր՝ Մարտ 23-ին, հանդիպած է նախագահ՝ Արմէն Սարգսեանին հետ, յայտնած են կառավարութենէն: Անոնք քննարկած են երկրի մէջ ստեղծուած իրավիճակը, ներքին քաղաքական մթնոլորտի բարելաման միտուած քայլերը եւ անդրադարձած խորհրդարանական արտահերթ ընտրութիւններու կայացման:

Կարեւորուած է ընտրութիւններու ազատ եւ արդար կազմակերպման ուղղուած անհրաժեշտ քայլերու իրականացումը, անոր կարգին՝ Սահմանադրութեան եւ օրէնսդրական դաշտի կատարելագործման միջոցով:

Յիշեցնենք, որ արտահերթ խորհրդարանական ընտրութիւններու կայացման մասին յայտարարած է վարչապետ Փաշինեան Դիմատետրի գրառմամբ՝ ամսաթիւ նշելով Յունիս 20-ը:

Իշխանութեան Ընտրական Ցուցակը Կը Գլխաւորէ Նիկոլ Փաշինեանը. Լիլիթ Մակունց

Իշխանութեան ընտրական ցուցակը կը գլխաւորէ վարչապետ Նիկոլ Փաշինեան, Մարտ 23-ին Ազգային ժողովէն ներս, լրագրողներու հետ ձեպագրոցի ժամանակ, յայտարարեց «Իմ Քայլը» խմբակցութեան ղեկավար՝ Լիլիթ Մակունց:



«Իմ քայլը» խմբակցութեան ղեկավար՝ Լիլիթ Մակունց

«Ես կարծում եմ՝ ցուցակը գլխաւորելու հետ կապուած ակնյայտ է, այսինքն՝ Նիկոլ Փաշինեանը», - ըսաւ Մակունց:

Հարցին, թէ արտահերթ խորհրդարանական ընտրութիւններուն կը պատրաստուին երթալ նոր, թէ՞ գործող Ընտրական Օրէնագրքով, խմբակցութեան ղեկավարը պատասխանեց. ««Իմ Քայլը» խմբակցութիւնը հակուած է Ընտրական օրէնագրքում ամբողջապէս համամասնական համակարգին անցում կատարելու փոփոխութիւններն ընդունելուն եւ համամասնական ընտրակարգով արտահերթ ընտրութիւններին գնալուն: Այս պահին քննարկումներ են ընթանում: Քննարկումը ներառում է տարբեր հատուածներ: Ընտրական օրէնագրքի փոփոխութիւնները բաւականին մեծ փոփոխութիւններ են ենթադրում իրենց

մէջ եւ այդ հատուածում [համամասնականի] նոյնպէս պէտք է որոշում կայացնել, նաեւ իրատեսական պէտք է լինեն փոփոխութիւններն առաջիկայ ընտրութիւնների համար»:

Ճշգրտող հարցին, թէ հնարաւոր է միայն համամասնականի հետ կապուած դրոյթը փոխուի, Մակունցը պատասխանեց. «Այս պահին վերջնական ձեւակերպում չտամ, ոչինչ չեմ բացառում այս պահին»:

Ռոպերթ Քոչարեանի Գործը Մտաւ Դատարանութեան Փուլ

Աւելի քան մէկուկէս տարի երկարած դատավարութենէն յետոյ Մարտ 23-ին, դատաւոր՝ Աննա Դանիբեկեան յայտարարեց, որ սահմանադրական կարգը տապալելու մէջ մեղադրուող Հայաստանի երկրորդ նախագահ՝ Ռոպերթ Քոչարեանի եւ անոր նախկին ենթականերու գործը մտաւ դատաքննութեան փուլ:



Ամբաստանեալ Ռոպերթ Քոչարեան դատարանէն ներս

Նշենք, որ երբ դատաւորը յայտարարեց այս մասին, Ռոպերթ Քոչարեանի փաստաբանները պոչքոթ ընելով հեռացան դատական նիստէն, ուստի ան յետաձգուեցաւ: Յաջորդ շաբաթ դատախազութիւնը կը ներկայացնէ մեղադրական եզրակացութիւնը: 2008-ի յետընտրական արիւնշալի իրադարձութիւններու գործով ամբաստանեալ երկրորդ նախագահ՝ Ռոպերթ Քոչարեանի եւ անոր նախկին երեք ենթականերու

գործով դատավարութիւնը Դանիբեկեանի վարոյթով մեկնարկած է 2019-ի Սեպտեմբերին: Գործը մէկուկէս տարիէ ի վեր չէ մտած հիմնական դատաքննութեան փուլ: Կողմերը զիրար կը մեղադրեն դատական նիստերը ձգձգելու համար, մասնաւորապէս, մեղադրող կողմը ամբաստանեալները մատնացոյց կ'ընէ տարատեսակ միջնորդութիւններով դատավարութիւնը ձգձգելու հարցով:

Խաղի Ընթացքին Կանոնները Փոխել Կարելի Չէ. Կ'ըստ ԼՀԿ-ն Առաջնորդ Էտնոն Մարութեան

ՀՀ Ազգային ժողովի «Լուսաւոր Հայաստան» խմբակցութիւնը կը վստահեցնէ, որ եթէ ընտրութիւններէն առաջ, խորհրդարանէն ներս «Իմ Քայլը» ընդունի նոր Ընտրական Օրէնագրք, ապա ԼՀԿ-ի հետ ունեցած բոլոր գործող պայմանաւորուածութիւնները ջուրը կ'իջնան: «Արմէնփրէս»-ի հաղորդմամբ՝ այս մասին ըսած է ԼՀԿ ղեկավար՝ Էտնոն Մարութեան:



ԼՀԿ ղեկավար՝ Էտնոն Մարութեան

«Մենք ասել ենք՝ եթէ օրէնագրքը փոխուի էլ, ընտրութիւններին մասնակցութեան մեր որոշումը չի փոխուելու, որովհետեւ ընտրութիւններն այլընտրանք չունեն, կը մասնակցենք ընտրութիւններին: Բայց խաղի ընթացքում խաղի կանոնները չի կարելի փոխել», - ըսաւ Մարութեան:

Ըստ ԼՀԿ-ի ղեկավարին, սակայն, մշակուած Ընտրական օրէնագրքը ամբողջութեամբ հում օրէնագրք է, եւ իրենք կ'առաջարկեն, որ այդ հում օրէնագրքը հիմա չընտրուի եւ անով չէրթան արտահերթ խորհրդարանական ընտրութիւններու: «Ընտրութեան օրը յայտարարելուց յետոյ չի կարելի փոխել գործող խաղի կանոնները: Նոր խաղի կանոններ ընդունելը նշանակում է ընտրութեան օրը կասկածի տակ դնել, հետեւաբար ճգնաժամը խորացնել երկրում», - նշեց Մարութեան:

Ամբողջական համամասնական ընտրակարգին անդրադառնալով՝ Մարութեան ըսաւ, որ այդ կը

Սերժ Սարգսեան Յայտարարած Է՝ Քաղաքական Խրամատը Երբեք Պիտի Չլքէ

Պետական պիւտճէէն մօտ կէս միլիարդ դրամի յափշտակութիւնը կազմակերպելու մէջ մեղադրուող երրորդ նախագահ՝ Սերժ Սարգսեանի եւ միւսներու դատական նիստի մեկնարկէն առաջ, Սարգսեան մօտեցաւ դատարանի բակը հաւաքուած իր աջակիցներուն եւ խօսք չղեց: Նախկին նախագահը ըսաւ, որ «երբեք չի լքելու իրամատը, որը պաշտպանում է հայկական պետականութիւնը»:



Նախկին նախագահ Սերժ Սարգսեան

«Ես կարող եմ յանուն Հայաստանի ժողովրդի, յանուն հայ ժողովրդի գիջել մի ողջ իշխանութիւն, բայց ես երբեք չեմ լքի իրամատը, որը պաշտպանում է հայկական պետականութիւնը: Հանրապետականի ձայնը եղել է հնչեղ եւ այդպէս էլ մնալու է: Մեր գործողութիւնները լինելու են յստակ, հաշուարկուած, համակարգուած, նպատակաուղղուած եւ ազնիւ», - ըսաւ Սարգսեան:

Ժողովրդական ճնշմամբ 2018-ին հրաժարական տուած նախկին նախագահ՝ Սերժ Սարգսեան, դիմելով դատարանի բակը հաւաքուած իր աջակիցներուն, ըսաւ, թէ ժողովուրդը պէտք է ընտրէ պետականամէտ կառավարութիւն, այդպէս ալ չչտակացնելով, թէ արտահերթ խորհրդարանական ընտրութիւններուն արդեօք ՀՀԿ-ն պիտի մասնակցի:

Յիշեցնենք, որ Սերժ Սարգսեան, դատարանի առջեւ կանգնած է յեղափոխութենէն յետոյ: Ըստ Յատուկ քննչական ծառայութեան՝ 2013 թուականին, ան կազմակերպած է, որ իր «Ֆլեյ» ընկերութեան ղեկավար՝ Բարսեղ Բեգլարեանի գրգմամբ եւ Սամուէլ Գալստ-

եանի ու Գէորգ Յարութիւնեանի օժանդակութեամբ գիւղատնտեսութեան նախկին նախարար՝ Սերգօ Կարապետեան վատնէ պետական պիւտճէէն 15 միլիոն լիթր վառելիքի համար նախատեսուած կէս միլիարդ դրամ գումարը: Նախկին նախագահի փաստաբանները այս գործը կ'որակեն քաղաքական հետապնդում, իսկ ինքը՝ Սարգսեան՝ անհետեւութիւն:

Սերժ Սարգսեանի դէմ ցուցմունք տուող նախկին նախարար Սերգօ Կարապետեանը վերջերս մահացաւ Քորոնայով ժահրով վարակուելէ ետք:

Սերժ Սարգսեանի փաստաբանները միջնորդութիւն ներկայացուցին անոր պատկանող գոյքը կալանքէն ազատելու համար, սակայն Դատարանը մերժեց այդ դիմումը:

Դատական յաջորդ նիստը տեղի կ'ունենայ մէկ ամիս ետք:

ԼՈՒՐԵՐ

Հայաստանի ԱԳՆ-ի Անդրադարձը Human Rights Watch-ի Ձեկոյցին

Հայաստանի Հանրապետության արտաքին գործոց նախարարության մամուլի խօսնակ՝ Աննա Նաղտալեան մեկնաբանած է հայ գերիներու մասին «The Human Rights Watch»-ի (Մարդկային իրաւանց հսկիչ) գեկոյցը: «Արմէնփրէս» ներկայացուցած է ՀՀ ԱԳՆ-ի մամուլի խօսնակի մեկնաբանութիւնը.

«The Human Rights Watch»-ը փաստագրել է հայ ռազմագերիների նկատմամբ իրականացուած լայնածաւալ պատերազմական յանցագործութիւնները: Ինչպէս նշուած է «The Human Rights Watch»-ի գեկոյցում, Ատրպէյճանի կողմից միջազգային մարդասիրական իրաւունքի խախտումներն իրականացուել են ռազմագերիների եւ քաղաքացիական պատանդների գերեզմարութեան ողջ ընթացքում՝ ուղեկցուելով դաժան ու նուաստացուցիչ վերաբերմունքով եւ խոշտանգումներով:

Ձեկոյցն ամրագրում է, որ բազմաթիւ հայ զինուորների վերջին անգամ տեսել են Ատրպէյճանում պատանդութեան մէջ, սակայն Ատրպէյճանը չի գեկուցել նրանց մասին: Սա վկայում է մեծածաւալ բռնի անհետացումների բարձր հասանակութեան մասին ոչ միայն զինծառայողների, այլեւ գերեզմարուած քաղաքացիական անձանց շրջանում:

Հրադադարի հաստատումից չորս ամիս անց հայ ռազմագերիների եւ քաղաքացիական պատանդների շարունակուող գերութիւնն ակնյայտօրէն ի ցոյց է դնում, որ Ատրպէյճանը շարունակում է միջազգային մարդասիրական իրաւունքի խախտումները: Ելնելով այն հանգամանքից, որ հայ ռազմագերիների նկատմամբ դաժան վերաբերմունքը եւ խոշտանգումները վկայում են դրանց համակարգուած բնոյթի մասին՝ հայ



Արտաքին գործոց նախարարութեան մամուլի խօսնակ՝ Աննա Նաղտալեան

ռազմագերիների շարունակուող գերութիւնը, վերջիններիս նկատմամբ նուաստացուցիչ վերաբերմունքը եւ խոշտանգումները կարող են հաւասարագոր լինել մարդկութեան դէմ յանցագործութիւնների»:

Human Rights Watch կազմակերպութիւնը յայտարարութիւն տարածած է, ուր նշուած է, որ Ատրպէյճանական ուժերը բռնութեան ենթարկած են 2020 թուականի դարաբաղեան ռազմական գործողութիւններու հետեւանքով գերութեան մէջ յայտնուած հայ ռազմագերիները՝ զանոնք խոշտանգումներու ենթարկելով ինչպէս գերեզմարելու պահին, այնպէս ալ տեղափոխելու կամ քննչական մեկուսարաններուն մէջ պահելու ատեն: Human Rights Watch-ի՝ Եւրոպայի եւ Կեդրոնական Ասիոյ տնօրէն՝ Հիւ Ուիլիամսըն նշած է. «Ձերբակալուած հայ զինուորների նկատմամբ դաժան վերաբերմունքը, ներառեալ՝ եւ խոշտանգումները նողկալի են եւ կը համարուին պատերազմական յանցագործութիւն»:

Նախարար Դաւիթ Բաբայեան Շուշիի Կանաչ ժամ Եկեղեցւոյ Աւերումը Ատրպէյճանական Ֆաշիզմի Դրսելորում Կը Համարէ

«Այն ինչ հայկական պատմամշակութային յուշարձաններու նկատմամբ իրականացնում է Ատրպէյճանն Արցախի գրաւուած տարածքներում՝ մշակութային ցեղասպանութիւն է»:

Այս մասին «Արմէնփրէս»-ի հետ զրոյցին նշեց Արցախի Հանրապետութեան արտաքին գործոց նախարար՝ Դաւիթ Բաբայեան՝ անդրադառնալով Ատրպէյճանցիներու կողմէն Շուշիի Կանաչ ժամ եկեղեցւոյ աւերման: «Ատրպէյճանցիները լաւ գիտեն մեր պատմութիւնը եւ այդ եկեղեցու աւերումը, ոչ այլ ինչ է, քան Ատրպէյճանի նախագահի եւ պետութեան ուղեբձն առ այն, որ այդպէս են վարուելու եթէ կարողանան տիրանալ ամբողջ Արցախին: Հայկական պատմամշակութային յուշարձանների նկատմամբ Ատրպէյճանի այդ գործողութիւնները՝ ֆաշիստական քաղաքականութեան շարունակութիւնն ու մարմնաւորումն են՝ գարշելի ու վտանգաւոր ձեւերով: Ատրպէյճանցիների այդ գործողութիւնները ոչնչով չեն տարբերուում նրանից, ինչը Մերձաւոր Արեւելքում իրականացնում են ասաբեկիչները՝ ոչնչացնելով համաշխարհային կոթողները: Տարբերութիւնը՝ աւելի վատ

ու վտանգաւոր, այն է միայն, որ եթէ Մերձաւոր Արեւելքում պատմամշակութային համաշխարհային կոթողները ոչնչացնում են ինչ-որ ասաբեկիչական խմբաւորումներ, ապա Ատրպէյճանցիների դէպքում, այդ գործողութիւններն իրականացնում են պետութեան կողմից: Այլեւս բաց է բաց, առանց ամաչելու եւ անկաշկանդ պետական մարմիններին համապատասխան յանձնարարականներ է տալիս», - ըսաւ Բաբայեան:

Բաբայեանի խօսքով՝ այս հանգամանքը արհամարհանք է միջազգային իրաւունքի նկատմամբ: «Բնական է, մենք ամենուր բարձրաձայնելու ենք՝ Ատրպէյճանի կողմից հայկական պատմամշակութային կոթողների աւերման մասին, որովհետեւ սա վտանգ է նաեւ քաղաքակիրթ մարդկութեան համար: Քաղաքակիրթ հանրութիւնն ինքն էլ պէտք է քայլեր ձեռնարկի, որովհետեւ եթէ այսօր նրանք ոչնչացնում են Արցախի մշակութային ժառանգութիւնը, ապա անպատիժ մնալու եւ միջազգային հանրութեան անտարբերութեան դէպքում, վաղն իրենց դուռն են թակելու», - ընդգծեց Արցախի արտաքին գործոց նախարարը:

ԶՈՒ Ապաքաղաքական Ըլլալու Ակզբունքը Պէտք Է Սրբօրէն Պահել. Վարչապետ



Սիկոլ Փաշինեան Պաշտպանութեան Նախարարութենէն Գերս հանդիպում կ'ունենայ Զինուած Ուժերու բարձրագոյն սպայակազմին հետ

«Համոզուած եմ, որ Արտակ Դաւթեանն իր առաքելութիւնը կը շարունակի նոյնպիսի բարձր մակարդակով, ինչպիսի բարձր մակարդակով սկսել էր», - յայտարարած է վարչապետ՝ Նիկոլ Փաշինեան՝ այցելելով Պաշտպանութեան նախարարութիւն, ուր Զինուած ուժերու բարձրագոյն սպայակազմին ներկայացուցած է ԶՈՒ գլխաւոր շտաբի նորանշանակ պետ Արտակ Դաւթեանը:

Նշելով, որ Դաւթեան Գլխաւոր շտաբի պետի պաշտօնը թողած է ծառայութեան հետ կապ չունեցող պատճառներով, վարչապետը արձանագրած է, որ Դաւթեանի հետ այս ընթացքին անընդհատ կապի մէջ եղած է ու պարզուած է, որ անոր ներուժը պէտք է անպայման օգտագործել պետական գործերու մէջ:

Յիշեցնենք, որ Արտակ Դաւթեան, 2018-ի Մայիսին ի վեր կը ղեկավարէր Գլխաւոր Շտաբը: 2020-ի Յունիսին, պաշտօնակազմի եղաւ քարանձիւի պայմաններու ժամանակ, որդիի հարսանիքի պատճառով, երբ արգելուած էին մարդաշատ միջոցառումները:

«Ի հարկէ, առաքելութիւնը հեշտ չէ, չափազանց ծանր ժամանակներ ենք ապրում եւ խնդիրներն աւելի քան լուրջ են: Խնդիր մէկ՝ պաշտպանել բանակը, պաշտպանել Զինուած ուժերը եւ խնդիր երկու՝ այնպէս անել, որ Զինուած

ուժերում տեղի ունենան անհրաժեշտ բարեփոխումներ, որոնք կ'ուժեղացնեն առաջին հերթին Զինուած ուժերը, Հայաստանի արտաքին անվտանգութեան պաշտպանութեան մակարդակը, եւ ի հարկէ, մեր բոլորի վստահութիւնը Զինուած ուժերի ու մեր անվտանգային համակարգի նկատմամբ», ըսած է Փաշինեան:

Վարչապետը Դաւթեանը ԳԾ պետ ներկայացնելու ատեն, շատ կարեւոր համարած է, որ Զինուած ուժերու ապաքաղաքական ըլլալու հանգամանքը ճշգրտօրէն պահպանուի, ան արձանագրած է՝ «այդ խնդիրը նոյնպէս Դուք կատարել էք շատ բարձր մակարդակով»:

«Մենք 2018 թուականի Դեկտեմբերին ունեցել ենք արտահերթ խորհրդարանական ընտրութիւններ եւ չի եղել մի հասգանգ, մի դէպք, երբ արձանագրուի, որ Զինուած ուժերը որեւէ ձեւով ենթարկուել են քաղաքական ներգործութեան կամ ներքաշուել են քաղաքական գործընթացների մէջ: Սա չափազանց կարեւոր է եւ համոզուած եմ, որ նոյնպիսի յստակ իրավիճակ մենք կ'ունենանք նաեւ հետագայում», - ըսած է վարչապետը:

Փաշինեան խնդրած ու պայմանաւորուած է, որ Զինուած ուժերու ապաքաղաքականացումը, հետագային ապաքաղաքական ըլլալու սկզբունքը պէտք է սրբօրէն պահել:

Թուրքիոյ Դատախազութիւնը Դիմած Է

Շարունակուած էջ 1-էն

բերութիւն չկայ ժողովրդա-դեմոկրատական կուսակցութեան եւ Քուրտիստանի Աշխատաւորական կուսակցութեան գինեալ խմբաւորումներուն միջեւ: Թրքական «Անատոլու» գործակալութիւնը կը հաղորդէ, որ դատախազութեան մեղադրանքով նշուած է՝ ժողովրդա-դեմոկրատական կուսակցութիւնը դարձած է երկրի անքակտելի միասնութիւնը խախտող գործողութիւններու կեդրոն, եւ որ անոնք աշխուժ գերակատարութիւն ունին Քուրտիստանի Աշխատաւորական կուսակցութեան անձնակազմ մատակարարելու գործով:

Reuters նշած է, որ Թուրքիոյ իշխանութիւնները երկար տարիներու ընթացքին ճնշումներու ենթարկած են ժողովրդա-դեմոկրատական կուսակցութիւնը, եւ հիմա կուսակցութիւնը փակելու նախա-

ձեռնութիւնը այդ ճնշումներու գա-գաթնակէտն է:

Քրտամէտ քաղաքական ուժի աջակիցներէն՝ Ավիտին Քարամանին Reuters-ին ըսած է. «Անոր հետեւանքով ժողովրդա-դեմոկրատական կուսակցութեան շրջանակներն ու ընտրողները մեծ վնաս չեն կրեր: Ինչպէս միշտ պայքարը կը շարունակուի աւելի ուժեղ, բայց այս մեծ վնաս կը հասցնէ Թուրքիոյ հասարակութեան: Անիկա խորը վէրքեր կը բանայ: Ցաւօք, այս կը կատարուի իշխանութիւնը պահելու համար, բայց կը յանգեցնէ հակառակ արդիւնքի»:

ԱՄՆ-ը եւ եւրոպական երկիրները քննադատած են Թուրքիոյ իշխանութիւններու նախաձեռնութիւնը: Իսկ Անգարան այդ քննադատութիւնները համարած է միջամտութիւն Թուրքիոյ արդարադատութեան համակարգին եւ կոչ ըրած է յարգելու իրաւական գործընթացը:

Պետք է Ուշադրութիւնը Կեդրոնացնել Թուրքիոյ Բացասական Դերին Վրայ. Ըսած է Արա Այվազեան Ֆրանսական Le Monde-ին

Ֆրանսական հեղինակաւոր «Le Monde» պարբերականին մէջ, Մարտ 19-ին հրատարակուած է Հայաստան գործուղուած թղթակից Ֆոթին Վենսանի յօդուածը: Ինչպէս կը հաղորդէ «Արմէնփրէս», լրագրողը հարցադրոյցներ ըրած է ՀՀ արտաքին գործոց նախարար՝ Արա Այվազեանի, տարածաշրջանային հետազոտութիւններու կեդրոնի տնօրէն Ռիչարտ Կիրակոսեանի, ինչպէս նաեւ Հայաստանի բնակիչներու հետ:

Լրագրողը անդրադարձած է Նոյեմբեր 9-ի յայտարարութեան, ինչպէս նաեւ այդ համաձայնութեան ծիրէն ներս 1960 ռուս զինուորի՝ Լեւոնային Ղարաբաղի մէջ խաղաղութեան պահպանման նպատակով հինգ տարի ժամկէտով տեղակայման: Նշած է, որ ռուս զինուորականները տեղակայուած են նաեւ Հայաստանի հարաւ-արեւելեան կողմը՝ Սիւնիք:

«Նրանք, ովքեր տեղակայուել են Հայաստանի տարածքում՝ Սիւնիքում, այդ զօրակազմի մաս չեն կազմում: Նրանք միջնորդների դերն են իրականացնում՝ խուսափելու Հայաստանի սահմանակից զիւղերի բնակիչների եւ ատրպէյ-ճանցի զինուորների միջեւ լարուածութիւնից», - յատկացուցած է ՀՀ Արտաքին Գործոց նախարարը:

Ֆոթին Վենսան անդրադարձած է ՀՀ պաշտպանութեան նախարար՝ Վաղարշակ Յարութիւնեանի Փետրուար 22-ին արտայայտած այն մտքին, որ Երեւան հակուած է 1995-էն Գիւմրի տեղակայուած ռուսական ռազմական զորքերի ընդլայնման երկրի հիւսիս արեւմտեան կողմը, եւ, որ Ռուսաստան նաեւ կ'օգնէ բարեփոխել հայկական բանակը: Նախարարը ակնարկեց, որ «Ղարաբաղի փորձը հաշուի առնելով՝ մեզ պէտք է արմատապէս վերանայել եւ բարե-



ՀՀ արտաքին գործոց նախարար՝ Արա Այվազեան

փոխել մեր հնարաւորութիւններն ու ուժերի թուաքանակը»: Ջանքերը կ'ուղղուին վերահսկման, հետախուզութեան, օդային պաշտպանութեան համակարգերու, անօդաչու ինքնաթիռներու, հրթիռներու եւ հրետանիի զարգացման:

Յօդուածագիրը անդրադարձած է, թէ ինչպէս 2018-ին ժողովրդական ու խաղաղ յեղափոխութեան յետոյ Նիկոլ Փաշինեան եկած է իշխանութիւն՝ տապալելով յետխորհրդային քրոնմփացուած վարչակազմը:

ՀՀ ԱԳ նախարարը նշած է, որ պէտք է ուշադրութիւն կեդրոնացնել տարածաշրջանին մէջ Թուրքիոյ բացասական դերին վրայ, ակնաստանքով աւելցուցած է, որ չնայած այդ ակնյայտ է՝ ամբողջ աշխարհը աչք կը փակէ այդ հանդիմանական վրայ: Ռուսաստանի դերի կապակցութեամբ՝ Արա Այվազեան ընդգծած է, որ Ռուսաստան մեր աւանդական դաշնակիցն է, եւ անոր շնորհիւ է, որ աղէտին խուսափեցանք: Եւ այսօր Ռուսաստանն է, որ թոյլ կու տայ խուսափելու նոր լարուածութենէն:

Սպիտակ Տան Աղբիւրները

Շարունակուած էջ 1-էն

նաեւ Ներկայացուցիչներու Տունը ընդունած էին համապատասխան բանաձեւեր, որոնցմով 1915 թուականին կատարուածը կը ճանչնային որպէս Հայոց Յեղասպանութիւն: Ան ընդգծած է, որ ժամանակն է, որ գործադիր մարմինը եւս ճանչնայ պատմական իրողութիւնը:

Սպիտակ Տան խօսնակի մեկնաբանութենէն յետոյ քաղաքագէտ, քաղաքական խորհրդատուութիւն տրամադրող առաջատար Eurasia Group-ի եւ համաշխարհային յարաբերութիւններու լուսաբանումը կատարող GZERO Media-ի նախագահ՝ Եան Պրեմըր յայտարարած է, որ Սպիտակ տան իր աղբիւրը յայտնած են, որ Պաշտոնի վարչակազմը կը պատրաստուի 1915 թուականին Օսմանեան կայսրութեան հայերու կոտորածները ճանաչել որպէս յեղասպանութիւն:

GZERO Media-ի մէջ հրապարակած բացառիկ տեսանիւթին մէջ Պրեմըր անդրադառնալով Սպիտակ Տան խօսնակի յայտարարութեան պատմած է. «[Սպիտակ Տան] խորհրդակցականներէն մէկը, իմ հարցին, թէ արդեօք կը հաստատէ, որ յեղասպանութեան ճանաչում

տեղի կ'ունենայ, ըսաւ ինծի, որ այդ այն է, ինչ ան (Իմբ.- Ճօ Պայտըն) խոստացած է որպէս թեկնածու եւ այդ քաղաքականութիւնը առաջ կ'երթայ: Սպիտակ Տան մէկ այլ պաշտօնեայ, անդրադառնալով Ապրիլ 24-ին՝ Յեղասպանութեան յիշատակի օրը կատարուելիք յայտարարութեան, ինծի ըսաւ, որ Պաշտոնի խօսքի մարդ է: Ուստի այս պահուն ակնյայտ է, որ ան պիտի ըլլայ առաջին ԱՄՆ-ի նախագահը, որ կ'ընէ այդ»:

Եան Պրեմըր նշած է, որ անկասկած Թուրքիոյ նախագահ՝ Ռէճեփ Թայէպ Էրտողանին ասիկա պարզապէս պիտի կատարեցնէ: Ան յիշեցուցած է, որ ԱՄՆ-ի եւ Թուրքիոյ միջեւ յարաբերութիւնները առանց այդ ալ վերջին շրջանին լաւ վիճակի մէջ չեն, մասնաւորապէս Անգարայի կողմէ ռուսական Ս-400 հակահրթիռային համակարգեր գնելու պատճառով: «Անկասկած, յեղասպանութեան ճանաչումը շատ աւելի պիտի բարդացնէ վերականգնել թուրք-ամերիկեան յարաբերութիւնները: Անգարան ինքզինք աւելի մեկուսացուած պիտի զգայ: Բացի այդ, անոնք հիմա հսկայական տնտեսական ճնշման տակ են».- նշած է Պրեմըր:

«Հայաստան» Հիմնադրամը Թիրախ

Շարունակուած էջ 1-էն

ասդին երբեք չէ մասնակցած նման հանդիպումներու: Ան շտապեց հանդէս գալ առանձին յայտարարութեամբ՝ քաղաքական երկարատև մեղադրանքներ հնչեցնելով կառավարութեան ու վարչապետի հասցէին, ըսելու համար որ ինք չի վստահիր ծախուած միջոցներու վերաբերելու հաւաստիացումներուն:

Քոչարեանի յայտարարութիւնը այժմ կ'օգտագործուի ծանօթ շրջանակներու կողմէ՝ վարկաբեկելու համար Հիմնադրամը ու կասկածի տակ առնելու անոր ազգանուէր առաքելութիւնը: Այդ արշաւին միացողներու շարքին է նաեւ Հիմնադրամի նախկին գործադիր տնօրէն՝ Արա Վարդանեանը, անց մը, որ իր իսկ խոստովանութեամբ Հիմնադրամի վարկային քարտը օգտագործած է ինքընեթային խաղատուններու մէջ:

Մեզի համար անհասկանալի է Կառավարութեան փոխանցուած գումարի շուրջ բարձրացած աղմուկը, երբ այդ փոխանցումը կատարուած է Հոգաբարձուներու խորհուրդի համաձայնութեամբ ու կողմերու միջեւ ստորագրուած պայմանագիրներու

հիման վրայ, որոնց շնորհիւ Հայաստանի ու Արցախի տարածքին կ'իրագործուին ենթակառուցուածքային, ընկերային եւ առողջապահական ծրագիրներ ու Արցախահայերը կը վերադառնան իրենց տունները՝ վերակառուցելու համար իրենց բնիկ օճախը:

Դժբախտաբար, այս օրերուն ամէն ինչ քաղաքականացուած է ու կ'օգտագործուի կառավարութիւն փոխելու եւ կամ իշխանութեան հասնելու նպատակով: Հիմնադրամը իր գոյութեան ամբողջ ընթացքին արժանացած է ու կը շարունակէ վայելել համայն Հայութեան վստահութիւնը: Ան միակ կառույցն է որ իր շուրջ կը համախմբէ մեր ազգային, կրօնական ու բարեգործական բոլոր կազմակերպութիւնները ու իր առաքելութիւնը կը կատարէ խղճմտօրէն եւ ամենայն թափանցիկութեամբ: Այս դժուարին համագրուանին, որմէ կ'անցնի Հայրենիքը, բարոյական պարտաւորութեան տակ ենք «Հայաստան» Հիմնադրամը թիրախ չդրածնելու ու հեռու պահելու զայն քաղաքական ամէն տեսակի շահարկումներէ:

«ՄԱՍԻՍ»

Ժողովրդի Իրաւունքը Օտարուել է

Շարունակուած էջ 1-էն

կիչներուն հետ հանդիպման ժամանակ Նիկոլ Փաշինեան անդրադարձաւ ՀՀ առաջին նախագահ Լեւոն Տէր-Պետրոսեանի այն յայտարարութեան, ուր ան առաջարկած էր ՀՀ վարչապետին անձեռնմխելութեան իրաւական երաշխիքներու ապահովմամբ ապաստան տալ արտերկրի մէջ: Ան ընդգծեց, որ ինքը ժողովրդի տուած վստահութիւնը չանարգել որեւէ փախուստով:

«Լեւոն Տէր-Պետրոսեանը յայտարարութիւն է անում, ասում է՝ կազմակերպենք վարչապետը Հայաստանից գնայ ուրիշ երկրում ապաստան գտնի: Չհասկացայ: Լեւոն Տէր-Պետրոսեանը իր փառահեղ քաղաքական կարիերայի ընթացքում երկու անգամ փախուստի շատ լաւ օրինակ է ցոյց տուել: Ես նմա՞ն եմ մի մարդու, ով կարող է փախչել, եթէ ժողովուրդը որոշի, որ ինձ գնդակահարելու է, ես խոնարհ կանգնելու եմ այդ գնդակահարութեան պատի տակ: Որեւէ մէկը չմտածի, որ ժողովրդի կայացրած որեւէ որոշումից կը փախչեմ: Եւ դուք ունէ՞ք այդ իրաւունքը, ժողովուրդը: Փախչողները թող մտածեն փախչելու մասին», - յայտարարեց Փաշինեան:

Նոյն ելույթի ընթացքին Փաշինեան ըսաւ, որ պատերազմէն յետոյ տեւած հինգ ամսուայ հակադրութեան ընթացքին ինք յաջողած է խուսափել քաղաքացիական բախումներէն: »Հայաստանում կան մարդիկ, ուժեր, որոնք արիւն են ուզում, այլ ոչ թէ ընտրութիւն. թիւ մէկ պատասխանատուն եմ, բայց ես թոյլ չեմ տալու, որ դուք լինէք իմ եւ մեր դատաւորը, իմ եւ մեր դատաւորը

պէտք է լինի ժողովուրդը, որովհետեւ ժողովուրդն է, որ կարող է դատի ձեռք էլ, մեզ էլ»:

Դարձեալ անդրադառնալով Ղարաբաղի հարցին եւ ունեցած զոհերու մասին վարչապետը ըսաւ. «Մեր տղերքը զոհուեցին այն բանի համար, որ երբ որ այսօր Ատրպէյճանի նախագահը յայտարարի, որ Ղարաբաղի հարցը լուծուած է, մենք կարողանանք ասել, որ Ղարաբաղի հարցը լուծուած չէ, որովհետեւ Ատրպէյճանի պլանը հէնց դա էր, որ Ղարաբաղի հարցը լուծել, որ ֆիզիկապէս Ղարաբաղում ոչ մի հայ չմնայ, մենք բոլորս դա գիտենք չէ՞: Բայց այսօր Արցախը կայ, արցախահայութիւնը կայ, եւ ես ուզում եմ ասել, որ դա մեր զոհուած եղբայրների, մեր զինուորների, մեր բանակի շնորհիւ: Այո, դառը պատերազմ ենք անցել, բայց էլի ուզում եմ արձանագրել, որ այն, ինչ ունենք, ունենք մեր տղաների շնորհիւ»:

Վարչապետը խօսեցաւ նաեւ տարածաշրջանային ճանապարհներու բացման մասին յայտնելով թէ, այդ ձեռնարկ է եւ Հայաստանի, եւ Ատրպէյճանի համար: «Դա ձեռնարկ է Ատրպէյճանին, որովհետեւ նա պէտք է կոմունիկացիոն կապ ստանայ Նախիջևանի հետ, եւ ձեռնարկ է Հայաստանին, որովհետեւ մենք պէտք է յուսալի երկաթուղային կոմունիկացիոն եւ ցամաքային կապ ստանանք երկաթուղիով Ռուսաստանի Դաշնութեան եւ Իրանի Իսլամական Հանրապետութեան հետ»:

Վարչապետը յայտարարեց որ, համաձայն է, որպէսզի քննարկուին պատերազմի բոլոր դրուագները, ինչպէս նաեւ բանակցային գործընթացը:

«Հայաստան» Համահայկական Հիմնադրամին Կողմէ Կառավարութեան Փոխանցուած Գումարին Վերաբերեալ Հաշուետուութիւն Կը Պատրաստուի

Մարտ 15-ին տեղի ունեցաւ «Հայաստան» համահայկական հիմնադրամի հոգաբարձուներու խորհուրդին արտահերթ նիստը, որու ընթացքին քննարկուեցաւ Արցախեան վերջին պատերազմի ընթացքին հիմնադրամին կատարած աշխատանքը: «Հայաստան» համահայկական հիմնադրամի հոգաբարձուներու խորհուրդի անդամ Պետրոս Թերզեանը «Լուրերուն» յայտնած է, որ հիմնականին մէջ քննարկուած է հիմնադրամին կողմէ ՀՀ կառավարութեան փոխանցուած գումարին հարցը, որ պէտք է օգտագործուէր ենթակառուցուածքային, ընկերային եւ առողջապահական բնագաւառներէն ներս:

«Զեկուցում ստացանք վարչապետէն, բացատրութիւններ՝ ելլեմտական նախարարութենէն: Այդ նիւթը տակաւին կը քննարկուի, որովհետեւ ասիկա մեզի համար շատ կարեւոր է: Հիմնադրամին օրէնքներէն մէկն այն է, որ հաշուետուութիւնները կատարուին վերահսկիչ մարմնի կողմէ, երբ վերջնական քննութիւնները կատարուին, այդ պահուն մեզի համար հարցը փակուած կ'ըլլայ: Ասիկա մեր գործելակերպն է, թող որեւէ մէկը չկարծէ, թէ ասիկա յատուկ ուղղուած է կառավարութեան», - ըսաւ Թերզեանը:

Պետրոս Թերզեանին խօսքով՝ հիմնադրամին եւ ՀՀ կառավարութեան միջեւ 9 պայմանագիր կնքուած է, որմով յստակօրէն նշուած է՝ եթէ կայ որոշ չափով գումար, որ չէ ծախսուած, ապա պէտք է վերադարձուի հիմնադրամին: Ըստ անոր՝ ասիկա նոր գործելակերպ չէ, անիկա կիրառուած է հիմնադրամին տասնեակ տարիներու աշխատանքի ընթացքին:

Հիմնադրամի հոգաբարձուներու խորհուրդի անդամ անդրադարձաւ նաեւ այն տեսակէտներուն, ըստ որոնց՝ կառավարութիւնը ամբողջ գումարը պէտք է վերադարձնէ հիմնադրամին: Թերզեանը նշեց, որ ասիկա պայմանագրի խախտում կը համարուի:

«Այս հարցը անհիմն է: Հոգաբարձուներու խորհուրդին ջանքախիչ մեծամասնութիւնը կողմ քուէարկած էր այս փոխանցումին, որմէ ետք պայմանագիրներ ստորագրուած են, որոնց մէջ նշուած է, որ գումարը նուիրաբերուած է, ասիկա կը նշանակէ, որ կառավարութիւնը պէտք է հաշուետուութիւն ներկայացնէ», - ըսաւ ան:

Նիստի ընթացքին քննարկուած են նաեւ Արցախի աջակցութեան վերաբերող հարցեր. վերակառուցում, քաղաքացիներու օգնութիւն, գիւղատնտեսութեան վերականգնում եւ այլն: Այդ մասին զեկուցած է ԱՀ նախագահ Արայիկ Յարութիւնեանը: Թերզեանի հաւաստմամբ՝ յառաջիկայ օրերուն պիտի յստականան կատարուելիք աշխատանքները:

«Բազմաթիւ ծրագիրներ կ'իրականացուին՝ պատերազմի ընթացքին վիրաւորուած գինուորներուն, զոհուածներու ընտանիքներուն, փախստականներուն եւ այլ խնդիրներու ուղղութեամբ: Յուսով ենք՝ յառաջիկային պիտի կարենանք ունենալ ծրագիրներու յստակ ցանկը եւ ամբողջութեամբ

Անգարայի Հայկական Գերեզմանատան Վրայ Խանութներ Կը Կառուցեն

Քրտամէտ ժողովուրդներու դեմոկրատական կուսակցութեան հայ պատգամաւոր՝ Կարօ Փայլանին Մարտ 16-ին թոյլ չեն տուած, որ մուտք գործէ Անգարայի Ուլու թաղամասը գտնուող տարածքը, ուր Թուրքիոյ կառավարութեան բնակարանաշինութեան զարգացման վարչութիւնը (TOKI) շինարարութիւն իրագործած է պատմական հայկական գերեզմանատան վրայ: Ինչպէս կը հաղորդէ «Արմէնփրէս»-ը, այս մասին յայտնած է Bianet-ը:

Առաջինը, Թուրքիոյ ճարտարապետներու պալատի Անգարայի մասնաճիւղին էր Մարտ 10-ին, հանգանգած այն մասին, որ մայրաքաղաքի պատմական Ուլու թաղամասի մէջ խանութներ պիտի կառուցեն պատմական հայ-

կական գերեզմանատան վրայ: Մասնաճիւղի տարածած հաղորդագրութեան մէջ մասնաւորապէս նշուած էր. «Գիտական ազբիւրներուն մէջ ըսուած է, որ այս տարածքը եղած է հայկական եւ կաթոլիկ գերեզմանատուն: Անօրինական փորման աշխատանքներու արդիւնքով յայտնաբերուած են մարդկային ոսկորներ, որոնք Անատոլական քաղաքակրթութիւններու թանգարանի կողմէն տարուած են ուսումնասիրման: Չնայած այս ամէնին՝ այս տարածքին վրայ շինարարութեան շարունակումը մեծ անարգանք է անատոլական հողերու բազմաշահ կուլթայնութեան նկատմամբ: Այս բարբարոսութիւն է, մարդու իրաւունքներու ոտնահարում»:


ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ՀԱՆԴԻՊՈՒՄ

Ս. Դ. Հնչակեան Կուսակցութեան Քաղաքական Դիւանի Կազմակերպութեամբ

Հրապարակային Հանդիպում Յայտնի Լրագրող Եւ Հեղինակ ԹԱԹՈՒԼ ՅԱԿՈԲԵԱՆ-ի Հետ



«Մահուան Հովիտ 44-Օրեայ Աղէտ» Գիրքի Հրատարակութեան Առթիւ



Տեղի կ'ունենայ ՈՒՐԲԱԹ, ԱՊՐԻԼ 2, 2021

Երեկոյեան ժամը 7:30-ին

ՀԿԲՄ-ի Փաստփնայի կեդրոնէն ներս՝ 1060 N. Allen Ave., Pasadena, CA 91104

Համաճարակի պատճառաւ տեղերը պիտի ըլլան սահմանափակ
Ձեր տեղը ապահովելու համար հեռաձայնել՝
626-797-7680

White House Intends to Acknowledge the Armenian Genocide

37 US Senators Call on President Biden to Officially Recognize the Genocide

WASHINGTON – U.S. President Joe Biden plans to make good on his pre-election promise to acknowledge the atrocities committed against the Armenians during World War One, a White House spokesperson has told Kathimerini.

Replying to a request for reaction to a letter initiated by Senator Bob Menendez and co-signed by 36 other senators of both parties, the spokesperson said the Biden administration has committed to ensuring that such atrocities will not be repeated and that a crucial part of this is the recognition of past atrocities.

On Friday, U.S. Senator Bob Menendez (D-N.J.), Chairman of the Senate Foreign Relations Committee, led 37 of his Senate colleagues in requesting the Biden administration join the U.S. Congress in officially recognizing the Ottoman Empire's genocide against the Armenian people. To date, no U.S. president has made it U.S. policy to affirm the historical facts of the Armenian Genocide, which lasted from 1915 to 1923 and resulted in the forced deportation of around 2 million Armenians, 1.5 million of whom were brutally killed.

"We join the Armenian community in the United States and around the world in honoring the memory of these victims, and we stand firmly against attempts to pretend that this intentional, organized effort to destroy the



Armenian people was anything other than a genocide," the Senators wrote in a letter to President Biden. "You have correctly stated that American diplomacy and foreign policy must be rooted in our values, including respect for universal rights. Those values require us to acknowledge the truth and do what we can to prevent future genocides and other crimes against humanity."

Beyond recognizing the facts of the Ottoman Empire's systematic extermination of Armenians, the Senators stressed that the move would rectify the executive branch's position regarding the Genocide by aligning it with congressional consensus as well as President Biden's previous remarks.

"Administrations of both parties have been silent on the truth of the

Continued on page 4

Armenia to Hold Early Parliamentary Elections on June 20



YEREVAN — Armenian Prime Minister Nikol Pashinyan has agreed to hold early parliamentary elections in June in an effort to defuse a political crisis sparked by the war with Azerbaijan over the breakaway Nagorno-Karabakh region.

Pashinyan said in a post on Facebook on March 18 that following talks with the leader of the opposition parliamentary faction Prosperous Armenia, Gagik Tsarukyan, it was agreed that early elections will be held on June 20.

During their meeting, Pashinyan and Tsarukyan agreed that the snap elections were "the best way out of the current internal political situation," the prime minister wrote.

"Taking into account my discussions with President [Armen

Sarkisian], the My Step faction, the leader of the Bright Armenia faction Edmon Marukyan, early parliamentary elections will be held in the Republic of Armenia on June 20," he added.

Marukyan said that he had a telephone conversation with Pashinyan and that holding early elections on June 20 was acceptable to his party.

A coalition of opposition parties has been holding anti-government demonstrations in Yerevan and other parts of the country in an unsuccessful effort to force Pashinyan to hand over power to an interim government.

Pashinyan, whose My Step faction dominates parliament, has refused to step down but had hinted at accepting early parliamentary elections under certain conditions.

Armenian, Russian Defense Ministers Discussed Security Situation in Syunik



Armenian Defense Minister Vagharshak Harutyunyan had a telephone conversation on Tuesday with Russian Defense Minister Sergey Shoigu, the press service of the Armenian Defense Ministry reported.

It said the defense ministers of the two allied countries discussed the main directions of large-scale reforms in the Armenian Armed Forces, the

issues of Armenian-Russian military cooperation, in particular, joint operations of the united troops, as well as the mission of the Russian peacekeeping contingent in Nagorno-Karabakh.

They also spoke about the security measures being implemented in Armenia's southern province of Syunik and the military and political situation in the region.

HRW: Armenian POWs Abused in Azerbaijani Custody

4) Չինաստան-Փաքիստան միջանցքը կ'ընդգրկէ մայրուղիի եւ երկաթուղային կապերու կառուցումը Չինաստանէն մինչեւ Փաքիստանի Կուաթար նաւահանգիստը՝ 4 հազար 148 քմ. երկարութեամբ։

Ծանօթ է, որ Մետաքսի հին ճամբան կ'անցնէր նաեւ Հայաստանէն, աւելի ճիշդ՝ Արտաշատ քաղաքէն եւ անկէ կ'ուղղուէր դէպի Սեւ ծովու նաւահանգիստներ։ 5-րդ դարուն, մայրաքաղաք Դուինը կը փոխարինէր Արտաշատը։

Այս անցեալին։ Վերադառնալով ներկայ իրողութեան, Հայաստան, Ատրպէյճան եւ Վրաստան մեծապէս շահագործուած են միջազգային ներդրումներով՝ իրենց անտեսական բարգաւաճումը խթանելու համար։ Այս շրջագիծին մէջ, Չինաստանի «Մէկ գօտի, Մէկ Ճանապարհ»՝ մետաքսի նոր ճամբայ նախաձեռնութիւնը կը նկատուի կարեւոր եւ երեք պետութիւններն ալ միջոցներ կը փնտռեն ընդգրկուելու անոր մէջ։

Երկու ծրագիրներ կան, որոնք կ'անցնին Հարաւային Կովկասէն եւ ունին ներուժը ընդգրկուելու «Մէկ Գօտի, Մէկ Ճանապարհ» նախաձեռնութեան մէջ։ Անոնցմէ մէկը Անդրկասպեան Միջազգային Փոխադրութեան ճամբան է, որ կը սկսի Չինաստանէն, կ'անցնի Ղազախստանէն, Կասպից ծովէն, Ատրպէյճանէն, Վրաստանէն եւ այնուհետեւ կ'ուղղուի դէպի Եւրոպա՝ կամ Վրաստանի Սեւծովեան նաւահանգիստներէն կամ ալ Թուրքիոյ տարածքով՝ օգտագործելով Պաքու-Թիֆլիս-Կարս երկաթուղիները։ Այս տարբերակը առիթ կ'ընծայէ Չինաստանի ապրանքներ փոխադրելու դէպի Եւրոպա՝ շրջանցելով Ռուսիան։ Ղազախստանի Աքթաու նաւահանգիստը եւ Վրաստանի Պաթումի նաւահանգիստը կը նկատուին հիմնական հանգույցները այս ծրագրին։ 2017-ի վերջաւորութեան Վրաստան կը սկսի կառուցել Անգլիոյ խորշրեայ նաւահանգիստը, որ կը բազմապատկէ այս ճամբուն

տարանցումի ներուժը։ Մայիս 2017-ին, Վրաստան եւ Չինաստան կը ստորագրեն ազատ առեւտուրի համաձայնագիր մը՝ երկկողմանի առեւտուրին եւ ապրանքներու տարանցումին զարկ տալու նպատակով։

Տակաւին, Ատրպէյճան եւ Վրաստան անդամ են Չինաստանի գլխավորած ենթակառուցներու Ասիական Ներդրումային Դրամատան (Asian Infrastructure Investment Bank (ABIA)), որ 600 միլիոն ամերիկեան տոլարի վարկ տրամադրած է Ատրպէյճանի՝ դէպի Թուրքիա գացող TANAP կազատարին կառուցման համար եւ 114 միլիոն տոլարի վարկ Վրաստանի՝ Պաթումիի նաւահանգիստը շրջանցող ճամբու կառուցման համար։ 2017-ին, Հայաստանի անդամակցութիւնը նաեւ կ'ընդունուէր նոյն դրամատան (ABIA), սակայն թեկնածուի հանգամանքով՝ մինչեւ դրամատան կողմէ դրուած կարգ մը նախապայմաններու ամբողջացումը։

Երկրորդ ծրագիրը կը վերաբերի Պարսից ծոց - Սեւ ծով բազմաբնոյթ փոխադրութեան միջանցքին, որ կը նախատեսէ Իրանը կապել Եւրոպային՝ Հայաստանի եւ Վրաստանի վրայով։ Այս ծրագրին հիմնական հարցերէն մէկն է Իրանը, Հայաստանը եւ Վրաստանը իրարու կապող փոխադրամիջոցներու արդիականացումը։

Հայաստանի Քաղաքական Գիտութիւններու Ընկերակցութեան գործադիր տնօրէն դոկտ. Բենիամին Պողոսեանի համաձայն, հաշուի առնելով Իրանի նշանակալի դերը «Մէկ գօտի, մէկ ճանապարհ» նախաձեռնութեան մէջ, Հայաստան իր կարգին ձեւեր կը փնտռէ «Պարսից ծոց - Սեւ ծով» միջանցքը Հայաստանի վրայով կապելու Վրաստանին՝ նկատի առնելով միջանցքի անտեսական մեծ բարիքները։

Տեղին է նշել, որ Չինաստան առաջին երկիրներէն մէկն էր, որ ճանչցաւ Հայաստանի անկախութիւնը Դեկտեմբեր 1991-ին՝ հաստատելով դիւանագիտական յարաբերութիւններ, որոնք վերջին տարիներուն բարելաւուած են մեծ չափով՝ նաեւ անտեսական, մշակութային եւ կրթական մակարդակներու վրայ։

2015-ին, Հայաստանի եւ Չինաստանի նախագահները կը ստորագրէին յուշագիր մը, որ բազմաթիւ մարզերու կողքին, նաեւ կ'ընդգրկէր Մետաքսի նոր ճամբու ծակցութեան կէտեր։ Բայց իրողութիւնն է, որ Հայաստանի դրացիները՝ Ատրպէյճան եւ Վրաստան շատ աւելի ներգրաւուած են «Մէկ Գօտի, Մէկ Ճանապարհ» ծրագրին մէջ քան Հայաստանը։

Վեր առնելով Հայաստանի դրացիներուն հետ Չինաստանի համագործակցութեան չափը, պարզ կը դառնայ, թէ Չինաստան որքան կը ծախսէ «Մէկ Գօտի, Մէկ Ճանապարհ»

պարհ» ծրագիրը ընդգրկող երկիրներուն մէջ, եւ որքան փոքր է Հայաստանի դերը՝ հակառակ յարաբերութիւններու սերտացման։ Վրաստան եւ Չինաստան 2018-ին ստորագրած են ազատ առեւտուրի համաձայնագիր մը, եւ Չինաստան ձեռք ձգած է Փոթիի նաւահանգիստին Տնտեսական Ազատ Գօտիի բաժնետոմսերուն 75% (Փոթին կը նկատուի Վրաստանի մեծագոյն նաւահանգիստը)։ 2019-ին, Չինաստան եւ Ատրպէյճան կնքած են 800 միլիոն ամերիկեան տոլարի անտեսական համաձայնագիր մը, եւ Չինաստան մեծ ներդրումներ կատարած է Պաքուի՝ Ալաթի միջազգային ծովային առեւտուրի նաւահանգիստին մէջ։

Շատ հաւանաբար, Հայաստանի Հիւսիս-հարաւ մայրուղիին ամբողջացումը կը նայ խթանել Հայաստանի յաւելեալ նեւարումը Մետաքսի նոր ճամբու ծրագրին մէջ։ 556 քմ. երկարութեամբ, \$2 միլիարտ արժողութեամբ եւ Հայաստանի համար ռազմավարական մեծ նշանակութիւն ունեցող եւ 2012-ին սկսած այս ծրագիրը, որ Իրանը պիտի կապէ Վրաստանի՝ Մեղրիէն Պաւար (Վրաստան) եւ Վրաստանի նաւահանգիստներ երկարող միջանցքով, պէտք էր աւարտէր 2019-ին, բայց ըստ նախատեսութիւններու, անոր կառուցման աւարտին համար նախատեսուած ժամկէտը երկարաձգուած է 7-10 տարիով՝ գլխավորաբար փտածութեան (կոռուպցիայի) եւ անկանոն ձեւակերպուած գործարքներու պատճառով։

Իբրեւ եզրակացութիւն, կը մէջբերենք նոր մետաքսի ճամբուն հետ Հայաստանի առնչութեան մասին հատուածներ Համաշխարհային Դրամատան (World Bank)՝ «Հարաւային Կովկասը եւ Կեդրոնական Ասիան»՝ «Գօտի եւ Ճանապարհ նախաձեռնութիւնը՝ Հայաստանի պարագան» ռուսումնասիրութեան (bit.ly/3bHhWvs)։ «Հասարակ այն իրողութեան, որ «Գօտի եւ Ճանապարհ նախաձեռնութեան» (Belt and Road Initiative) պատկանող որեւէ միջանցք չ'անցնի Հայաստանէն, երկիրը դեռ կընայ օգտուելի անկէ եւ այդ օգուտները խթանել, եթէ ենթակառուցներու բարելաւման գուզահեռ իրականացումին ժամանակակից բարեկարգումները։...«Բարելաւուած ենթակառուցներու օգուտները քաղելու համար անհրաժեշտ են տարածաշրջանային աւելի ամուր համագործակցութեան պայմաններ։ Համագործակցութեան նպատակով կատարուած նախաձեռնութիւններու զգալի պակաս մը գոյութիւն ունի Հարաւային Կովկասի եւ Կեդրոնական Ասիոյ մէջ, ինչպէս՝ առեւտուրի եւ փոխադրամիջոցներու հարցեր եւ վէճերու լուծման արդիւնաւէտ մեքանիզմներու բացակայութիւն»։

www.civinet.am

Ձեր Ծանուցումները Վստահեցէք «Մասիս» Շաբաթաթերթին
 Masis2@earthlink.net (626) 797-7680

ՎԱՐՁՈՒ ՄՐԱՇ
ՓԱՍՏԻՆԱՅԻ ՄԷՋ (200 ԵՈՂԻ ՂԱՍԱՐ)
ԱՄԵՆ ՏԵՍԱԿ ԱՌԻԹԵՐՈՒ ՂԱՍԱՐ
 1060 N. ALLEN AVE. PASADENA CA 91104
 (626) 797-7680

Լազուարթ

ՆՈՐԱՅՐ ՏԱՏՈՒԲԵԱՆ

- ձիշղ է, աշխատասիրութիւնս կարելի է գոյներու նուիրումած առաջին հայերէն գիտական աշխատանքը նկատել:

- Եւ շատ ճաշակաւոր աշխատանք պարուն Պապէսեան: Կը տեսնեմ, թէ ինչպէս ամէն գիտական հրատարակութիւն, նոյնպէս ալ ձեր «գունախօսութիւնը» կը սկսի «գոյն» բառի սահմանումով:

- Այո, նախաբանի մէջ ներառեցի հետեւեալ սահմանումը. «Գոյնը աչքի վրայ արտադրուած մասնաւոր տպաւորութիւնն է, զոր դէպի մարմիններ լուսաւոր ճառագայթներու ցոլացումէն յառաջ կու գայ»:

1909ին Մարգուան քաղաքի «Ներսո եւ Սրապեան» տպարանէն լոյս տեսաւ բնական գիտութիւններու ուսուցիչ Յովհաննէս Պապէսեանի «Եօթը Գոյներ» գիրքը: Աշխատասիրութիւնը նուիրուած է գոյներու ծագման, դասաւորման, ինչպէս նաեւ՝ անոնց անուանակոչումին: Պապէսեանին կը հանդիպիմ Սիմ Հաճի գիւղի իր աշխատասենեակին մէջ: Յարգելի ընթերցող, կատարածս մտաւոր, կամ՝ երեւակայական ճանապարհորդութիւն մըն է: Հաճելի է նոյնիսկ Պապէսեանի նման հեղինակաւոր անձնաւորութեան մը հետ գոյներու եւ մանաւանդ անոնցմէ ամենէն արքայականին՝ լազուարթի մասին գրուցելու գաղափարը:

Իր գրասեղանին վրայ Պապէսեանը ունի գիտական գործիքներ, օպտիտիանի, տուֆի եւ այլ քարերու մանր բեկորներ, նամակներու պահարաններ, կաթնուկի նորարոգը տերեւներու փունջ մը եւ Ամասիոյ «Ապառուծ» ամսաթերթի նոր թիւը, որ նոյնպէս տպուած է Ներսո Սրապեան տպարանի մէջ: Ամենէն ուշագրաւը, սակայն, Պապէսեանի հարուստ գրադարանն է, ուր քիչ չեն նաեւ բնագիտութեան նուիրուած եւրոպական գործեր:

- Կը շնորհաւորեմ պարոն Պապէսեան, յաջողած էք ձեր գիրքին գունատիպ հրատարակութեան մը տեսքը տալ:

- Իւրաքանչիւր գոյնի համար փոքր տուփիկ մը գծագրեցինք ապա զանոնք մէկմէկ ձեռքով ներկեցինք, ներառեալ՝ ոսկեգոյնը եւ արծաթագոյնը:

- Գեղեցիկ է տեսնել, թէ վերջին էջի վրայ նոյնիսկ առաջարկած էք գոյներու հայեցի անուանակոչումներ:

- Բառացանկ մը անհրաժեշտ էր...: Կան գոյներ, որոնք բոյսի, ծաղիկի, պտուղի կամ մետաղի մը անունով կը կոչենք, ինչպէս՝ գմրուխտագոյն, արենագոյն, կեռասագոյն, երկնագոյն, սաթագոյն, ծիրանագոյն, պղնձագոյն եւ այլն:

- Եւ կայ անոնց ազնուագոյնը՝ լազուարթը:

- Այո, ամէնէն արքունավայելը, ան, որ կը զարդարէ փարաւոն թուրքանիսամուսի եւ թագուհի կղեւոպատրայի կոպերը: Լազուարթը ակնածանքով կը գործածէին վերածնունդի մեծագոյն գեղանկարիչները, զայն վերապահած ըլլալով նկարի կեդրոնական տիպարի՝ մասնաւորապէս Մարիամ Աստուածածնի, ինչպէս նաեւ հրեշտակներու տարազները գունաւորելու համար:

- Իսկ հայկական մատենագրութիւնը կը չիշէ, թէ «լազուարթ» բառի հին ձեւերն էին

լաժուարդ, լազուրդ, լաջուարդ, լաճվարտ եւ լաճուարդ: Ըստ ստուգաբանութեան եւ հանգաբանութեան, անոր աղբիւրն է գոճագմ քարի «Մարէ Սանկ» կոչուած հանքը: Այդ հանքը կը գտնուի Աֆղանիստանի Բադախշան նահանգին մէջ: Մեր բառը պարսկերէնէ փոխառութիւն է, բունը՝ lazvard, թէ՛ հանքավայրը եւ թէ՛ գոճագմ քարը: Այս երկնագոյն թանկագին քարը իր անունի հետ տարածուեցաւ ու դարձաւ համաշխարհային: Հնդկաստանի մէջ՝ lajavarta, rajavarta, արաբներու համար քարը՝ lajvard կամ lazvard, գոյնը՝ lajvardi, ստորին լատիներէնի մէջ քարը՝ lazurum, lazurius կամ lazur, իսկ գոյնը՝ azurum, azura, բիւզանդական յունարէնը լազուրիոն, իտալիոյ մէջ քարը՝ lapislazzolo, գոյնը azurro, չեխերէն եւ լեհերէն lazur, վրացերէն lažvardi, կամ՝ lažvardovani, ռումաներէն եւ ֆրանսերէն՝ azur:

- Եւ անշուշտ, Ֆրանսայի Cote d'Azur յայտնի ծովափը...: Գոճագմ քարը ունի խորունկ կապոյտ երանգ, ոսկեգոյն աչքաու բիծեր եւ սպիտակ մանր երակներ: Ան առաջին քարերէն է, որ գործածուած է արքունի ոսկերչութեան մէջ: Մարդիկ նոյնիսկ հաւատացեր են, թէ անիկա ունի «խորհրդաւոր ուժեր»: Ուշ միջնադարու եւրոպացի գեղանկարիչները զայն աղալով յաջողեցան ձեռք բերել խիստ հագուագիւտ «ultramarine» ներկափոշին: Մենք զայն կրնանք անուանել՝ «անդրծովեայ»:

- Լազուարթը ներշնչեց նաեւ հայ բանաստեղծը... «Կը շարժին սէրվիք (նոճի ծառը) լազուարդ երկնից մէջ կանգնած»: Տիրան Չրաքեանի «Նոճաստան» գիրքին մէջ կը հնչեն այս խօսքերը:


- Պոլիսէն պատուիրեցի այդ երիտասարդ տաղանդի նորատիպ ժողովուածուն: Շուտով կը հասնի ու կը հարստացնէ գրադարանս:

- Հայկական գրականութեան խորութիւններու մէջ պարոն Պապէսեան, մեր աչքերը կը շարունակեն շրջանցնել լազուարթին փայլը ունեցող խօսքեր. «Անյայտ ծովերի լազուարթ անիւրոմ / Լուսեղէն մի բախտ միշտ կանչում է ինձե, Աւետիք Իսահակեան, «Սենեակս [...] նոճիներու, սեւամած անտառներու ու անոնցմէ անդին լազուարթ ծովուն եւ նեղուցի մը կ'իշխէ», Տիրան Չէօկիւրեան, «Եւ ամէն մէկ հպումիդ հոգիս էր որ ինկաւ լազուարթ ձեռքիդ տակ» եւ «Լազուարթ ժամեր լուսնի», Միսաք Մեծարեան: Իսկ ձեր սիրած Տիրան Չրաքեանի քնարին կը պատկանին լազուարթով ներկուած ընտիր արտայայտութիւններ. «Լաժուարթ արշալոյս», «Լաժուարթ ստուերներ», «Նոճեաց լաժուարթ խաւար», «Ահա լուսինը կը ծագի լաժուարթ գիշերին մէջ», «Ո՛ր, նոճիներ, լաժուարթ վերջալոյսին մէջ բարձրացած»: (Իսկ այս գրոյցէն եօթը տասնամեակ յետոյ դարձեալ Պոլսոյ մէջ բանաստեղծ իզնա Սարըասլանը պիտի գրէր հետեւեալ տողիկը. «Կորսուեցայ գիշերուան լազուարթ մթութեան մէջ»):

- Ձեր գիրքի վերջին էջի վրայ կայ... սեւը:

- Ճշմարտութիւնը, յարգելի հիւրս, սեւը գոյն չէ, այլ՝ գոյներու բացակայութիւնը, ինչպէս որ մութը բացակայութիւնն է լոյսի:

- Գիրքի պատրաստութեան ընթացքին, զգալի է, թէ նկատի առած էք հայ աշակերտութիւնը:



- Աշխատասիրութիւնս կը նուիրեմ նոր սերունդի դաստիարակութեան: Միամեայ յեղափոխութիւնը լուսաւոր ապագայ մը կը խոստանայ կայսրութեան բոլոր ազգերուն, մանաւանդ հայ ազգին: Ազատութեան մթնոլորտ մը կայ Պոլիսէն մինչեւ Հայկական Նահանգներ: Հետեւաբար, հայեցի կրթութիւնը նոր թափ մը պիտի առնէ, կասկած չունիմ: Սիմ Հաճի գիւղի մէջ կան Պարթեւեան արական եւ Հոփսիմեան իգական դպրոցները: Անոնց աշակերտները անկասկած կ'օգտուին գիրքէս: Իսկ

մօտ օրէն կը մեկնիմ Եւրոպիա: «Եօթը գոյներ»ը ծրագրած եմ տրամադրել այդ քաղաքի հինգ վարժարաններուն, վարդանեանին, Վարդուհեանին, Ս. Աստուածածինին, Ս. Երրորդութեան եւ Ս. Գէորգին: Հայ մտաւորականութիւնը նոր եռանդով սկսած է աշխատելու ու երկիրը յառաջ տանելու: Բոլորս համոզուած ենք, թէ գիտութիւնը ազատութիւն է:

- ձիշղ է, գիտութիւնը ազատութիւն է եւ խաղաղութիւն է լազուարթ երկնքի տակ:

«ԱԿՕՍ»

ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ ԿՏՐՕՆ

Yes, I wish to subscribe to Massis Weekly
 Enclosed a check for (one year)
 * \$50,00 * \$100,00 (first class) for USA
 \$ 125,00 (Air Mail) for Canada.
 \$ 250,00 (Air Mail) Overseas.

Name: -----
 Address: -----
 City: ----- State:----- Zip Code:-----
 Country: -----
 Tel :-----
 Email: -----

Թուրքիա-Իզմիր քաղաքի Միջազգային Ցուցահանդես Այցելութիւն

«Պատառ-պատառ կ'ընեն հայրենի հողը, կը յօշոտեն մոլուցքով Ու մեր ափին մէջ կը մնայ Աշխարհի չափ պատառ մը՝ ՀԱՅԵՐԵՆԸ
Մեր հիւրերը, հիւրախ եւ հիւրառատ մխիթարութիւնը:
Ընայ՛ գայն առատօրէն որ հաղորդուինք
Մեր նախնիներու իմաստութեան հետ»:

Յովհաննէս Գրիգորեան

ՊՕՂՈՍ ԱՐՄԵՆԱԿ ԼԱԳԻՍԵԱՆ

Ծատուր Աղայեանի Թուրքիա այցելութեան եկած խումբը եղել նաեւ Եգէական ծովափի Իզմիր քաղաքում կազմակերպուած միջազգային ցուցահանդէսի խորհրդային տաղավար: Յոցահանդէսին մասնակցել էին 42 երկրներ: Իզմիր քաղաքի աշխարհագրական դիրքի պատճառով, 37 տարիներ շարունակ, այնտեղ կազմակերպուել միջազգային ցուցահանդէս-տօնավաճառներ: Խորհրդային Միութեան տաղավարի վրայ թուրք ազգայնական խուժանի յարձակում եղել, մեծ վնաս պատճառուել նրան:

Ոչ պաշտօնական, երկրորդ անձի կողմից ինձ պատմուել էր Իզմիր քաղաքի ցուցահանդէսի խորհրդային Միութեան տաղավարի վրայ ազգայնական թուրք ստահակների յարձակման մասին եւ այդ առիթով նաեւ հետաքրքիր մանրամասներ, որոնք արժանի են յիշատակութեան:

Եղեռնից ճողոպրած մի ընտանիք հասել հիւսիսային Կովկասի երկրամաս: Մանչերը ուսական դպրոց էին յաճախել, երկրի բարձրագոյն ուսումնական հաստատութիւններում կրթութիւն ստացել: Վաթսուականների սկզբներին, նրանցից Յակոբ Զարուպեան նշանակուել Հայաստանի կոմունիստական կուսակցութեան առաջին քարտուղար: Ընտանիքում լսած եղել մեծերի պատմածները, սիրտը լցուել հայի ցաւով, մի ձեռով հատուցանել ցեղի վիշտը, հայոց երկրի այդ մի փոքրիկ մասում բազում գոհուածների յիշատակութեան օր կազմակերպել, այն գնար դարերին, ապրելու, արարելու տենչանքի լոյս կաթելու մնացողաց սրտերին, նրանց հոգիների խաղաղութեան պատարագ մատուցանել, թուրքից վրէժ իրականացնելու համար կրթել մանուկներին, որոնք աշխարհը լուսաւորելին հայու հանձարի լոյսով: Հանդիպման էր գնացել Խորհրդային Միութեան Կեդրոնական կոմիտէի առաջին քարտուղար Նիկիտա Մրուչչեւի մօտ: Զրոյցի ատեն, Զարուպեան յիշատակել հայոց եղեռնի յիսուն ամեակի տարելիցի մասին, խնդրել՝ այդ առիթով Երեւանում գոհուածների յիշատակին յուշարձան կառուցել: Խորհրդային Միութեան յարաբերութիւնները թուրքիայի հետ այժմ բարօք են, պէտք է չէր այն թշնամացնել: Անցել էին մի քանի տարիներ, Յ. Զարուպեան նորէն հանդիպման գնացել Կեդրոնական կոմիտէ: Խորհրդային կոմիտէի հետ զրոյցի ընթացքում ասել, որ ինչքա՛ն անյարիր արձագանգ թողել Իզմիրում Խորհրդային տաղավարի վրայ թուրքերի յարձակումը: Խորհրդային խիստ գայրացել: Յ. Զարուպեան, այդ առիթը օգտագործելով կրկնել նախկինում իր խնդրանքը՝ Երեւանի բարձրագոյն մասում հայերի Մեծ Եղեռնի յիշատակութեան կրթող կառուցել, ի փոխադարձութիւն թուրքերի կողմից Իզմիրի ցուցահանդէսի տաղա-

վարի վրայ յարձակման, նրա աւերման: «Գնացէ՛ք» կառուցէք ասել էր Ն. Մրուչչեւ: Ա. Զարուպեան, Կենտրոնի իր գրասենեակ հրաւիրել համապատասխան մասնագէտի, «Գնացէ՛ք սկսէ՛ք Երեւանի բարձագիր ձեռնարկաբերը բլուրի վրայ եղեռնի յիսուն ամեակին նուիրուած յուշարձան՝ կառուցէ՛ք»:

Իզմիր քաղաքի պատերին պատաստներ էին փակցուած եղել, երիտասարդութեանը ուղղուած կոչեր, մասնակցելու հաւաքի, երկրում կոմունիզմի հարցերը քննարկել: Այն ատեն Թուրքիայում շատ էին գործածուել՝ կոմունիզմ, սոցեալիզմ բառերը: Երկրի յետադէմ ուժերը իրենց թշնամանքն էին արտայայտել այդ գաղափարախօսութիւնների դէմ: Սակայն, Թուրքիայում գտնուել էին մարդիկ, որոնք համակրանք էին տածել այդ գաղափարների հանդէպ: Այդ ատեն քաղաքական նշանաւոր անձնաւորութիւն՝ Իսմէթ Ինէնիւն, արտայայտուելով Թուրք-Խորհրդային հարաբերութիւնների մասին, ասել՝ «Սոցիալիզմը ընդհանրապէս վատ բան է»: Իսմէթ Ինէնիւն, Աթաթուրքի մահից յետոյ ընտրուել երկրի նախագահ:

Իզմիր... հայաշատ քաղաք: Այնտեղ էր ծնուել համբաւաւոր արդիւնաբերող, անմասն մարդ, հայասէր, հայկական մշակոյթային հիմնարկութիւններին սատարող, Հայ դպրոց հիմնադրող, ցմահ Հայկական Բարեգործական Ընդհանուր Միութեան նախագահ՝ Ալեքս Մանուկեան, յետագայում փոխադրուել Ամերիկայի Միացեալ Նահանգներ: Ինքն էր հնարել, մի ընդհանուր ծորակից պաղ ու տաք ջուր հոսող սարքը, արտօնագրուել իր անունով, աշխարհի տարբեր երկրներում «Մասկօ» անունով երեք հարիւր ձեռնարկութիւններ հիմնադրել:

Նուպարեան ընտանիքի նախնիները Արցախից գաղթել, հաստատուել Իզմիրում: Ապա վերաբնակուել Եգիպտոս: Անմասն եղել նրանց դերը Եգիպտոսի քաղաքական ու տնտեսական զարգացմանը: Նուպար եղել երկրի արտաքին գործերի նախարար, ապա մի քանի անգամներ երկրի վարչապետ: 1906 թուական, Ապրիլ 6, կիրակի օր, Նուպար Փաշայ ու տեղի ազգայիններ ժողովի նստել, Հայկական Բարեգործական Ընդհանուր Միութիւն էին ստեղծել: Բարեգործականը, այնտեղ է, որտեղ օգնելու կարիք կայ: Գոյատեւում է հարիւր ու աւելի տարիներ, տարեկան 40 միլիոն տոլարի ելեւմտացոյց ունի: Եգիպտոս, Նուպար փաշայի յիշատակը յաւերժացնելու համար Աղեքսանդրիայի մայր հրապարակում անմահացրել Նուպարին, նրան քանդակել ձիու վրայ բազմած, Եգիպտոսի մարդիկ նրա մոտով անցնելով, մի պահ նայում նրան, ժպտում, յաւերժութիւն մաղթում: Նուպարի որդի՝ Պօղոս Նուպար Փաշայ, երկրում երկաթուղիի ցանց կառուցել, Նեղոսի ջրերով երկրի դաշտերը ոռոգելի դարձրել: Ծաղկել էին դաշտերը, սպիտակել էին

դաշտերը, մանրաթել բամբակ, կարծես ձիւնով էր ծածկուել Նեղոսի հովիտը: Հողի մշակութիւնը դիւրացնելու համար աշխարհում առաջինը «Տրակտոր» ստեղծել, Ֆելլա՛հ նստած նրա դեկին, «Եա-լէ» երգելով բամբակի սերմերն հողին տուել: Պօղոս գնաց Եւրոպա, Հայկական Հարցի ջատագովը եղաւ: Ֆրանսայի ու Անգլիայի արտաքին գործերի նախարարներ՝ Սայքսի ու Փիքոյի հետ ժողովի նստել, որոշել էին Հայկական կամաւորական բանակ ստեղծել, գրաւել Կիլիկիան, Ֆրանսական խնամակալութեանը հայկական պետութիւն ստեղծել: Նրա պատուիրակ Միհրան Տամատեան երեք կուսակցութիւնների կառավարութիւն կազմել, վեց հարիւր տարիներ յետոյ մէկ օրեայ կառավարութիւն, նոյն այդ ֆրանսան, նոյն օրը լուծարեց այն...:

Դիտել էին Իզմիրում ուսանողական տարուայ սկսելու առիթով աշակերտների ցոյցը: Դպրոցական հազուստով լողունգներ էին տարել՝ «Գրիչը սուրից էլ գորեղ գէնք է... մեր ամենամեծ թշնամի տգիտութիւնն է... երեխաները ամենաթանկ գանձերն են: Հայաստանում նման ցոյց... երբեք, անիմաստ ու նոր ժամանակների համար խիստ վտանգաւոր ցոյցեր, նորէն պատերազմ է լինելու, խորհուրդ արէք, նոր գէնք ու սպառազինութիւն, պարտութիւնից յետոյ յաղթանակ, աշխարհի առաջ մատ է թափ տալիս Հայուն, նա յաղթել է միայն բարեկամ թուրքի, Իսրայիլի գէնքի ու արաբ աւազակների մասնակցութեամբ: Այցելել էին Միլեթ, յոյն նիւթապաշտ փիլոսոփայ Թալեսի հայրենիքը: Այնտեղ էր նաեւ Ապուլոնի տաճար-յուշարձանը, Արտեմիսի տաճարը, խելակորոյս Հերոստրատ իր անունը յաւերժացնելու համար հրաշլիք այրել: Այդ շրջանի յունական մշակոյթի հնագոյն կեդրոնները պատմական մեծ արժէք ունեն: Թուրքերը նրանց ոչնչացրել են, արեւմտեան երկրներն էլ տեղի յուշարձանները տարել իրենց թանգարաններ:

Իզմիր - Զմիւռնիա, եղել հայկական մեծ գաղթօճախ: Հայերը այնտեղ գաղթել շատ հին ատեն: 1375 թուականին Կիլիկիայի թագաւորութեան անկումից յետոյ հայեր նաեւ այնտեղ հաստատուել, Եղեռնից յետոյ էլ քսան հազարից աւելի գաղթականներ: 1759 թուականին Հայ մարդ Մարկոս հիմնադրել առաջին հայկական տպարանը: Յետագայում հիմնուել էին մէկ տասնեակից աւելի տպարաններ, որտեղ տպագրուել էին մշակոյթային բազմաթիւ պարբերականներ: Հիմնուել էր նաեւ ժամանակի խոշոր հրատարակախօս Մաթեոս Մամուրեանի տպարանը, որտեղ հրատարակուել «Արեւմտեան Մամուլ» հանդէսը: Մ. Մամուրեան ղեկավարել ու տեղի հայկական մշակոյթի տարածման մեծ դեր ունեցել, հիմնադրել տեղի «Մեսրոպեան Վարժարանը»:

Իզմիր... նրա մասին համացանցից քաղել համառօտ տեղեկութիւններ, որոնք արժանի են յիշատակութեան: Առաջին Համաշխարհային պատերազմ, 1918 թուականի Հոկտեմբերի 30-ին Լեմնոս կղզում կայացած Մուտրուսի գինադադար, 1916 թուականի Սայքս-Փիքոյ համաձայնագիր, 1919-1920 թուականների Փարիզի հաշտութեան համաժողով, 1920 թ. Օգոստոս 10 Սեւրի Պայմանագիր: Անտանտի յաղթանակած պետութիւններ ձեռնարկել Օսմանեան կայսրութեան նուաճած երկրների ազդեցութեան

գօտիների բաժանումը: Արաբական թերակղզում պետութիւններ, Անգլիական խնամակալութեան պետական միաւորումներ՝ Իրաք, Յորդանան, Պաղեստին, Ֆրանսական խնամակալութեան Սուրիա, Լիբանան պետութիւններ: Յունաստանին իրաւունք վերապահուել վերագրուել Արեւելեան Թրակիա, Փոքր Ասիայի արեւմտեան շրջաններ: Սայքս-Փիքօ համաձայնութեամբ Հայկական կամաւորական գունդը գրաւէր Հայկական Կիլիկիան, Նուբար Փաշայի պատուիրակ Միհրան Տամատեան Ատանայում ստեղծել հայկական երեք կուսակցութիւնների կառավարութիւն, ֆրանսան շտապել էր Սենեկալ գինուորներ ուղարկել, ցրել մէկ օրեայ հայկական պետութիւնը, հայերին ու քիւրտերին ոչինչ...:

1919 թուականի Մայիս 15-ին Յունաստանը գրաւել էր Իզմիրը-Զմիւռնիան քաղաքը: Կայսրութեան մասնատման դէմ հանդէս եկել ազգայնական Մուստաֆա Քեմալ Աթաթուրքը: Մերժել էին կայսրութեան ժողովուրդների անախտութեան ու պետականութեան վերականգման ձգտումները: 1920 թուականի Ապրիլին օգնութեան խնդրանքով դիմել Խորհրդային Ռուսաստանին, որը նոյն թուականի Յոնիսին ճանաչել Քեմալական կառավարութիւնը:

1920 թուականին Յունաստան գրաւել էր Պորուսան ու Ատրիանապոլիսը: Սուլթանի կառավարութիւնը նոյն թուականի Օգոստոսի 10-ին ստորագրել Սեւրի պայմանագիրը, պարտաւորուել Յունաստանին վերադարձրել Արեւելեան Թրակիան, Կալիփոլի թերակղզին, Իզմիրը (Զմիւռնիա): Մուստաֆա Քեմալ Աթաթուրք չի ճանաչել Սեւրի Դաշնագիրը, Ռուսաստանից ստացել 10 միլիոն (սակով) ռուբլի, գինամթերք գնել, ռազմական գործողութիւններ կատարել Յունաստանի ու արեւելքում Կիլիկիոյ հայերի ու Հայաստանի դէմ: Այդ նպատակ էր կնքելու խորհրդաթրքական հակահայկական 1921 թուականի Մարտի 16 պայմանագիրը: 1921 թուականին Ֆրանսան Անկարայի պայմանագիրը կնքել թուրքիայի հետ, հրաժարուել թուրքիոյ դէմ պայքարից: Ֆրանսական զօրքը նահանջել Կիլիկիայից, նահանջել թէ գաղտնի փախել, Օ՝ Հ Ֆրասիա, գիտե՛ս այդ երկրի վերջին թագաւորը քո տոհմից էր, վերականգնէիր նրա իշխանութիւնը, նրա զարմից շատեր քու երկրում դեռ շարունակում պահել իրենց նախնիների թագաւորի յուշը: Հայ Մանուշեան մատուռ պատել նրա շիրմի վրայ... հանգիստ ննջել: Հայաստանի առաջին նախագահը ու Ֆրանսայի նախագահ Միտերան՝ 1996 թուականին այցի գնացել էին մատուռ, լոյս վառել Լեւոն 6-րդի 600 ամեայ տապանի վրայ: Լեւոն 6-րդ շրջել Եւրոպական երկրներ՝ գինական օգնութիւն խնդրել ազատագրելու իր թագաւորած երկիրը... չեղաւ: 1915 թուականին Իթիհատ չէր գործադրել Իզմիրի 12 հազար Հայ բնակչութեան գաղթը, նրանք ոչ միայն ապահով եղել, այլ նաեւ օգնել գաւառների հայութեանը:

1921 թուականին, Յունաստանի բանակը գրաւել թուրքիայի որոշ տարածքներ, մինչեւ 40 կիլոմէթր մօտեցել Անկարային: Թրքական հրամանատարութիւնը, Թուրքիայում գտնուող խորհրդային զօրավար Ֆրունզէի մշակած մարտա-

ՄԱՅԱԶԳ

ԺԻՐԱՅՐ ՄՈՒՂԱԼԵԱՆ

Խոր ցաւով կը գուժենք մեր ամուսնոյն, հօր, մեծ հօր, եղբօր, հօրեղբօր, մօրեղբօր եւ հարազատին՝ ԺԻՐԱՅՐ ՄՈՒՂԱԼԵԱՆ-ի Մահը, որ պատահեցաւ Չորեքշաբթի, 17 Մարտ 2021-ին, առաւօտեան ժամը 1:30-ին:

- Սգակիրներ՝
- Տիկին Լայլա Պալատի
- Տէր եւ Տիկին Միշէլ եւ Ջարուհի Մուղալեան եւ զաւակունք
- Տէր եւ Տիկին Ալէն եւ Նատին Մուղալեան եւ զաւակունք
- Տիար Մովսէս Մուղալեան եւ դուստրը
- Այրի Տիկ. Մարիթան Մուղալեան
- Այրի Տիկ. Նուէր Մուղալեան եւ ընտանիք
- Տէր եւ Տիկ. Աբրահամ եւ Անի Տէր Նիկողոսեան
- Տէր եւ Տիկ. Յարութ եւ Նաժտա Մուղալեան
- Տէր եւ Տիկ. Ռուբէն եւ Սոնա Մուղալեան
- Տէր եւ Տիկ. Փօլ եւ Մատլէն Մուղալեան
- եւ համայն Մուղալեան, Պալատի, Էլլայքեան, Մնէյմնէ եւ Օհանեան ընտանիքներ եւ ազգականներ:

ՑԱՒԱԿՑԱԿԱՆ

ԱՆԱՀԻՏ ԳԹԸՖԵԱՆԻ մահուան տիւր առիթով Թորոնթոյն Տէր եւ Տիկին Սեպուհ եւ Արմինէ Պոյաճեան իրենց խորագգաց վշտակցութիւնները կը յայտնեն հանգուցեալի ամուսնոյն՝ Մահակ Գթըֆեանին, զաւակներուն եւ համայն պարագաներուն:

«Մեր Դիտանկիւնէն»

Շարունակուած էջ 11-էն

Քաղաքական իրավիճակը, Միջին Արեւելքն ու Սուրիահայուցութիւնը, Դէմքեր ու Դէպքեր, Ազգային կրօնա-Ընկերային Հարցեր, Ազգային եւ Ազատագրական պայքար: Միջ-գաղութային Ակնարկներ եւ Խօսք Գնահատանքի:

Տօքթ. Արշակ Գանճեանի «Մեր Դիտանկիւնէն» հատորը պատմա-

բանասիրական եւ ազգային-մշակութային ու մեր ներկայ ընկերային կեանքին հետ առնչուող ձեռն-տու աշխատասիրութիւն մըն է, ապագայ վերլուծութեաններու եւ բանասէրներու համար:

Այս առիթով կը շնորհակտանք հեղինակի տասնեակ տարիներու նուիրեալ ծառայութիւնները, մաղթելով քաջաւոր իր կենսախիղ տարիներ:

Յոյսի եւ Լոյսի Կեռնը

Շարունակուած էջ 11-էն

ցութեան, իր պատկառելի հեղինակութեան շնորհիւ փրկուեցան բազմաթիւ մարդկանց կեանքերն ու ինչքերը: Երկրորդ՝ 1918-ին հայ-վրացական պատերազմին դէմ հանդէս եկաւ յստակ կեցուածքով՝ որ դրացիներու միջեւ անտեղի պատերազմը վնասակար է երկու կողմերուն: Ան թիֆլիս բնակելով, կ'ընդվզէր ամէն լարուածութեան եւ ատելութեան դէմ՝ անոր մէջ տեսնելով երրորդ կողմի մը յետին շահերը՝ որոնք կործանարար էին տեղի ազգաբնակչութեան համար: Երրորդ՝ 1921-ին, երբ Հայաստանի մէջ ծայր առաւ քաղաքացիական պատերազմը (ոմանք անհեթեթեթօրէն ապստամբութիւն կը կոչեն) դաշնակցական ժամանակաւոր իշխանութեան եւ պոլշեկներու միջեւ, անմիջապէս փութաց Երեւան՝ հաշտութեան եզրեր գտնելու եւ եղբայրասպան կռիւները դադրեցնելու: Եւ ինչ հեզնանք, իշխանաւորներ տնային կալանքի կ'ենթարկեն զինք՝ ենթադրելով որ ան յատուկ առաքելութեամբ ղրկուած է համայնավարներու կողմէ: Մինչդեռ՝ անոր նպատակն էր՝ վերջ տալ յուժկոտ արնահոսութեան:

Խաղաղասիրութեան կողքին, այնքան փիւրուն էր սիրտը մարդկայնական բանաստեղծ Յ. Թումանեանի, որ կարելի է համարել միջազգային մակարդակի մարդկայնական մը՝ որուն սիրտը կը մղկտայ նոյնիսկ անմեղ անասուններու համար.

Երագունըս մի մաքի
Մօտս եկաւ հարցնուցի.

Աստուած պահի քո որդին,
Ո՞նց էր համը իմ ձագի...
Խղճահար է սիրտը որսորդ
բանաստեղծին՝

Մի հաւք գարկի ես մի օր.
Թըռալ, զընաց վիրաւոր:
Թըռչում է միշտ իմ սընթում
Թեւը արնոտ ու մոլոր:

Թումանեանի կեանքը հեւասպառ վազք մըն էր բոլորին համար՝ ընտանիք, ազգային-մշակութային կազմակերպութիւններ, մտաւորականութիւն, որբահաւաք, հայ եւ օտար գրողներ, բանտ ու աքսոր, մամուլ, գիրք ու անմոռանալի քէյֆեր՝ ըստ ականատես Վահան Տէրեանի, Վերնատուն, մամուլ եւ հրապարակագրութիւն, եւ դեռ ինչ երազներ ունէր կատարելիք գրականութեան եւ հայրենասիրութեան առումներով. ահա թէ ինչու կը գրէր այսպէս.-

Կեանքըս արի իրապարակ,
ուրքի կոխան ամենքի.
Խափան, խոպան ու անպըտուղ,
անցաւ առանց արդիւնքի:

Ինչքան էջեր կարելի է լեցնել
Թումանեանական միտքերով,
արարքներով եւ յուզմունքներով:
Ինչքան սորվելիքներ կան անկէ՝ որ
կեռնի նման լոյս բաշխեց ազգին,
հայրենիքին ու սերունդներուն.

Քանի՞ ձեռքից եմ վառուել,
Վառուել ու հուր եմ դառել,
Հուր եմ դառել՝ լոյս տուել,
Լոյս տալով եմ ըսպառուել:

Այս օրերուն, անյազօրէն կը փնտռենք Թումանեան հանճարը: Մարդասէրն ու ազգասէրը, որ հայոց ամենամառաջ օրերուն, օրինակելի լաւատեսութեամբ գրեց եւ կտակեց կարճ ու կտրուկ պատգամ մը՝

Յոյսի հայրենիք, լոյսի

ԱՊԱՔԻՆՄԱՆ ՄԱՂԹԱՆՔ

Գաղութիս ծանօթ ազգայիններէն, «Մասիս»-ի ներհուն աշխատակից՝ լրագրող եւ հասարակական գործիչ՝ Տիար Խաչիկ ձանոյեան, վերջերս ենթարկուած է վիրաբուժական լուրջ գործողութեան մը եւ այժմ կը բոլորէ իր կազդուրման շրջանը: Շուտափոյթ եւ կատարեալ ապաքինում կը մաղթենք մեր յարգելի աշխատակիցին:

«ՄԱՍԻՍ»

Թուրքիա-Իզմիր Քաղաքի Միջազգային Ցուցահանդես Այցելութիւն

Շարունակուած էջ 14-էն

վարութեանը, 1921 թուականին Սաքարիա գետի մօտ ճակատամարտ՝ պարտուել էր Յունաստանը: 1922 թուականին Յունական բանակը ուրիշ մարտերում էլ պարտութիւն կրել:


Սեպտեմբերին թրքական զօրքը ներխուժել է Իզմիր-Չմիւռնիա, Աթաթուրքի բանակի զինուորները կարմրած ջահեր վերեւ պահած այրում այն տները որոնց դռներին խաչ էր գծուած, որ այրէին նաեւ նրանց պաշտած Աստուածորդուն: 1922 թուականի Սեպտեմբերի իննի Իզմիրի հրդէհ... 36 ժամ հրդէհուած էին քաղաքի քրիստոնեայ թաղամասերը, աւարարել էին հայ բնակիչների միլիարդների հասնող հարստութիւնը: Աւարարել էին Հայկական Սուրբ Ստեփաննոս ու յունական Այա-ժոթին տաճարները, նրանց թալանելուց յետոյ ուժանակներով պայթեցրել... մարմարէ սիւները տարել իրենց նոր մայրաքաղաք Անկարա, տեղի նոր կառուցները գարդարելու: Քաղաքի Յոյն ու Հայ բնակչութեան սպանդը տեսել Սեպտեմբերի 9-ից մինչեւ 30-ը: Ով կարողանում էր ճողոպրել հրդէհից, ստոյգ մահից շտապել հասնել նաւահանգիստ: Մարդկային հեղեղ էր նաւահանգստի ափերին, բազմահազար մարդիկ աղաղակում, կանչում, փրկութիւն աղերսում այնտեղ խարսխած 25 ֆրանսական-ամերիկեան-անգլիական նաւերին, ոչ մի նաւ աստիճանները չէր իջեցրել, ժողովրդավար հռչակուող պետութիւնների նաւերի նաւապետներ, ձեր վերջին դատասանի օրը եթէ հարցնեն՝ «Ուր է քու եղբայր Աբել», ինչ պիտի պատասխանէք, այնպէս ինչպէ՞վ Լեփսիոս Էնվեր Փաշայի հետ տեսակցութեան ատէն նրան հարցրել՝ «Ուր է քու եղբայր Աբել»... լուել էր: Մարդ արարած, քու միտք, հոգի, սիրտ, բանականութիւն, նմանի հանդէպ ցաւի գիտակցութիւն ինչքան են այլա-

փոխուել...: Մուսա Լեւոցի մարտիկ Արամայեան ճակատամարտից վերադառնալուց անտառում հանդիպել թուրք զինուորի, ձեռնամարտ... տապալել հակառակորդին, ոտքը դրած լանջին, սեղմել կոկորդը, նրա դէմքին «մահ» էր տեսել, թուլացրել ձեռքը, կանչել՝ «Ինչու ես եկել այս լեռներ հայուն սպաննելու, վեր կաց, մահ չեմ պատճառելու քեզ, գնա՛ հաց վաստակիր քու մանչերին, քու ծնողներ սպասում քեզ», վախեցել էր վեր կենալ ու գնար, Հայր թողել նրան հեռանար, կանչելով նրան նորէն այս լեռներ չգալ...: Իտալական վեց ռազմանաւեր մօտեցել ափին, ասիճանները իջեցրել, քարափի մարդիկ բարձրացել նաւեր, երեւի նաւապետը իմացել է իրենց զօրավար Պոմպիլիոսի ու հայոց արքաների-արքայ Մեծն Տիգրանի միջեւ կնքուած դաշնագիրը, Հոռովմէական կայսրութիւն ու Հայաստան դաշնակիցներ եղել, Հոռով մօտ քարէ քարտէջ, հորիզոնական գծով բաժանուած երկու մասի՝ Հոռով ու Հայաստան...: Կեցցէ Հայաստան, Հայ, բաժանելու բան չի մնացել, թո՛ղ քու երկրի գահին տիրելու վէճը, թող ուրիշին խնդրելու մոլուցքդ, իմաստուն ես դու, ստեղծիր գէնք, թող ոչ ոք յանդգնի քու բզկտուած հողին մօտենալ...:

Ռազմանաւերի կողքին առետրական նաւ էր, նաւապետ, նաւաստիներ դիտում ծովափի արհաւիրքը, մարդկանց աղիորմ ճիչերը, օգնութիւն աղերսելու կանչերը, դիտում կրակի բոցերից կարմրած քաղաքը...: Նաւապետը հաւաքել նաւաստիներին, հրամայել մետաքսի հիւսուածքով լցուած հազարաւոր պարկերը ծով թափել, որպէսզի նարաւոր լինի նաւի տարողականութիւն ստեղծել, ափի մարդկանց նաւ բարձրացնել...: Հայ մարդ, մարդիկ, հաւատացէ՛ք, նման մարդ կը լինի, հակառակ հարստութեան կորուստ վասն մարդու փրկութեան... կարող է նա այլ մոլորակային արարած էր:

հայրենիք: Որովհետեւ՝ յոյս ու լոյս պարգեւեց հայոց մշտավառ կեռոնը՝

մեծն ՅՈՎՀԱՆՆԷՍ ԹՈՒՄԱՆԵԱՆ:
«ԱՐԱՐԱՏ» ԼԻԲԱՆԱՆ



NATIONAL NOTARY ASSOCIATION
NOTARY PUBLIC

MEMBER

Garine Depoyan

626-755-4773

554 N. Chester Ave Pasadena, Ca. 91106

ghdepoyan@gmail.com

www.massispost.com
daily news updates

«Լեսթեր Սիթին» «Չելսիին» եւ «Մանչեսթր Սիթին» հասան Անգլիոյ Գաւաթի Կիսաեզրափակիչ

Անգլիոյի ֆուտպոլի գաւաթի կիսաեզրափակիչի հերթական ուղեգիրը նուաճեց «Լեսթերը»:

«Քառորդ եզրափակիչին «աղուէնները» մրցեցան «Մանչեսթր Եունայթեմին» դէմ ու յաղթանակի հասան 1:3 արդիւնքով: «Կարմիր սատանաներու» միակ կողմը նշանակեց Մեյսըն Կրինուուտը, իսկ «Լեսթերի» կազմէն աչքի ինկան Կելեչի Իհեանաչոն (երկու կոլ) եւ Եուրի Թելեմանսը:

Կիսաեզրափակիչի ընթացքին «Լեսթեր» պիտի մրցար «Սաութհեմփթընի» դէմ:

Լոնտոնի «Չելսին» նոյնպէս հասաւ Անգլիոյ ֆուտպոլի գաւաթի կիսաեզրափակիչ:

Քառորդ եզրափակիչին «Չելսի» սեփական յարկի տակ ընդունեց «Շեֆիլտ Եունայթեմին» եւ առաւելութեան հասաւ 2:0 արդիւնքով: Նախ ինքնագոլի հեղինակ դարձաւ Օլիվեր Նորվուտը եւ խաղաւարտին լրացուցիչ ժամանակին աչքի ինկաւ Հակիմ Զիեչը: «Չելսին» հասաւ գաւաթի խաղարկութեան կիսաեզրափակիչ:

Անգլիոյ գաւաթի շրջագիծէն ներս «Մանչեսթր Սիթի» եւս կիսաեզրափակիչի 0:2 արդիւնքով պարտութեան մատնելով «Էվըրթընին»:

Կիսաեզրափակիչի վիճակահանութեան արդիւնքով «Չելսի» պիտի մրցի «Մանչեսթր Սիթի» հետ:



Թելանեանը Յաղթեց Ատրպէյճանցիին, Յարութիւնեանը՝ Պուլկարացիին Ու Իրաւունք Ստացան Մասնակցելու Ողիպիական Խաղերուն



Հայաստանի ազատ ոճի ըմբշամարտի հաւաքականի երկու անդամները յաղթեցին Պուտայեշտի Ողիպիական վարկանիշային մրցաշարին:

«Արմենփրեսի» հաղորդումով՝ 57 կգ քաշային կարգի եզրափակիչին Արսէն Յարութիւնեանը մրցեցաւ եւ գերազանցեց պուլկարացի Գէորգի Վանգելովին 8:3 հաշուով: Յարութիւնեանը նախօրէին յաղթելով կիսաեզրափակիչին ապահոված էր Թոքիոյի 32-րդ ամառային Ողիպիական խաղերու ուղեգիր:

65 կգ քաշային կարգի եզրափակիչին Վազգէն Թելանեանը եզրափակիչին յաղթեց Ատրպէյճանը ներկայացնող՝ Հաջի Ալեւի՝ 9:0 արդիւնքով իրաւունք ձեռք ձգեց՝ մասնակցելու Ողիպիական խաղերուն:

Մինչ այդ Հայաստանը ունէր երկու ուղեգիր՝ Թոքիոյի խաղերուն մասնակցելու՝ յունահռոմէական ոճի ըմբշ 0Ս ախոյեան Արթուր Ալեքսանեանի եւ Կարապետ Չալեանի շնորհիւ:

2020 Թոքիոյի 32-րդ ամառային Ողիպիական խաղերը յետաձգուած էին համաճարակի պատճառաւ եւ այժմ պիտի կայանան այս տարուայ Յուլիսի 23-էն Օգոստոսի 8-ի միջեւ:

«Արսենալ»-ը Խուսափեցաւ Պարտութենէն

Անգլիայի ֆուտպոլի առաջնութեան 29-րդ հանգրուանին Լոնտոնի «Արսենալը» արտագնայ խաղի ընթացքին մրցեցաւ «Ուեսթ Հեմի» հետ:

«Արմենփրեսի» հաղորդումով՝ մեկնարկային 32 վայրկեաններէն յետոյ «Արսենալ» կը պարտուէր 3:0 արդիւնքով:

Խաղի մնացեալ ժամանակի ընթացքին «Արսենալ» նշանակելով երեք յաջորդական կոլեր կարողացաւ հաւասարացնել արդիւնքը եւ խուսափիլ պարտութենէն:

Այս հանգրուանէն ետք «Արսենալ» փրեմիեր Լիգայի մրցաշարային աղիւսակին վրայ 9-րդն է, իսկ «Ուեստ Հեմը»՝ 5-րդը:

«Պարսելոնան» Յաղթական Սան Սեպաստիանի Սեջ



Սպանիոյ ֆուտպոլի առաջնութեան 28-րդ հանգրուանին «Պարսելոնան»-ն հիւրընկալուեցաւ «Ռեալ Սոսյետատէն»:

Սան Սեպաստիանի մէջ կայացած կոլաուտ խաղի ընթացքին կաթալոնական «Պարսելոնան» յաղթեց 1:6 արդիւնքով: Երկու քական կոլի հեղինակները դարձան Սերժինիօ Դեստը եւ Լիոնել Մեսին, մէկական կոլ նշանակեցին Անթուան Գրիգմանը, Ուսման Տեմպելէն: «Ռեալ Սոսյետատի» միակ կոլը նշանակեց Անտեր Մուզուրուսան:

Այս հանգրուանի աւարտին «Պարսելոնան» Լա Լիգայի մրցաշարային աղիւսակին վրայ 2-րդ դիրքի վրայ է եւ ունի 62 կէտ: Առաջատարը 66 միւլտրով Մատրիտի «Աթլետիքոն» է, իսկ եռեակը կ'եզրափակէ «Ռեալը»՝ 60 կէտով:

«Ռոման» Առանց Մխիթարեանի Զիջած Է «Նափոլիին»

Իտալիոյի ֆուտպոլի առաջնութեան 28-րդ հանգրուանին «Ռոման» սեփական յարկի տակ ընդունեց «Նապոլիին»:

«Արմենփրեսի» հաղորդումով՝ Հոմմի Օլիմպիական մարզադաշտին վրայ կայացած խաղի ընթացքին «Նապոլին» երկու անպատասխան գնդակ ուղարկեց «գայլերու» բերդը:

Հայաստանի ֆուտպոլի ազգային խումբի աւագ Հենրիկ Մխիթարեանը ընդգրկուած չէր «Ռոմայի» կազմն մէջ վնասուած քի պատճառով, որ ստացած էր Եւրոպայի լիգայի «Շախտիորի» դէմ խաղի ընթացքին:

Այս հանգրուանէն յետոյ «Ռոման» ն Սերիա Ա-ի մրցաշարային

«Եուվենթուս» Որոշած Է Պահպանել Ռոնալդուին

Թուրինի «Եուվենտուսի» մարզական տնօրէն Ֆաբիօ Պարատիչին յայտարարած է, որ փորթուլացի յարձակող Կրիշտիանու Ռոնալդուին չհեռանար իտալական ակումբէն:

«Մենք որոշած ենք պահպանել Ռոնալդուին: Ան աշխարհի լաւագոյն խաղացողն է: Ունինք նախագիծ, որ սկսած ենք կառուցել նախորդ մրցաշրջանէն: Մէկ հանդիպում չի կրնար փոխել մեր մօտեցումը: Կը շարունակենք շարունակել մեր ճանապարհով եւ շատ գոհ ենք, ինչ որ ըրած ենք: Կը շարունակենք աշխատիլ ու զարգանալ», - ըսած է Պարատիչ:



Լուրեր կը շրջանառուէին, որ Ռոնալդուին այս մրցաշրջանի աւարտին լրնայ վերադառնալ Մատրիտի «Ռեալ»:

36-ամեայ ֆուտպոլիստի գործակալ Ժորժէ Մենդէշ արդէն սկսած է Արքայական ակումբի հետ քննարկել այդ տարբերակը:

Իտալական ակումբի հետ Ռոնալդուին գործող պայմանագիրը նախատեսուած է մինչեւ 2022-ի ամառը: Անոր տարեկան աշխատավարձը 31 միլիոն եւրօ է:

Փորթուկալի հաւաքականի աւագը 2018-ի ամրան Մատրիտի «Ռեալէն» տեղափոխուած է «Եուվենթուս»:

«Միլան» Յաղթեց «Ֆիորենթինային»

Իտալիոյի ֆուտպոլի առաջնութեան 28-րդ հանգրուանին «Միլան» հիւրընկալուեցաւ «Ֆիորենթինային»:

Ֆլորենտիայի մէջ կայացած խաղին «Միլան» յաղթանակի հասաւ 2:3 արդիւնքով: Տան տէրերու կողմը նշանակեցին Էրիք Փուլկարը եւ Ֆրանք Ռիպերին, իսկ «Միլանի» կազմէն աչքի ինկան Զլատան Իբրահիմովիչը, Պրահիմ Տիասը եւ Հական Չալհանօղլուն:

Այժմ «Միլան» Սերիա Ա-ի մրցաշարային աղիւսակին վրայ երկրորդն է եւ ունի 59 միւլտր: 65 կէտով առաջատարը Միլան քաղաքի միւս խումբն է՝ «Ինթերը»: Եռեակը կ'եզրափակեն «Եուվենթուսը» եւ «Ատալանտան»՝ 55-ական կէտով:

աղիւսակին վրայ կը գրաւէ 6-րդն տեղը եւ ունի 50 միւլտր: «Նապոլին» այս յաղթանակի շնորհիւ երեք կէտով առաջ է մայրաքաղաքային խումբէն (53 կէտ) եւ կը գրաւէ 5-րդ տեղը: